

ԱՌԱՆՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկևիչի

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Պարիզ, 2 ապրիլի:

Տաս ամսից աւելի կը լինի ինչ յիշատակարանումն ոչինչ չեմ գրել, թէև արդէն այնպէս սովորել եմ այդ աշխատանքին, որ պակասութիւնը թաւալի էր ինձ համար: Բայց ինքս ինձ ասում էի՝ ինչի՞ պէտք է որ: Ինձ ճշշում էր այն գիտակցութիւնը, թէ թէկուզ Պասկալին արժանի մտքեր գրեմ, մտքեր՝ աւելի խոր քան ովկեանի խորքերը ու աւելի բարձր քան Ալպեան սարերը, այնուամենայնիւ չեմ փոփոխիլ այն մի հատիկ հասարակ իրողութիւնը, որ Անեկան մարդու է գնացել: Այդ իրողութեան առաջ ձեռներս թուլանում էին: Կեանքը երբեմն ամփոփում է մի միակ՝ էպպէս աննշան նպատակի մէջ և երբ որ այդ նպատակը պակասում է մարդուս, մարդ չի իմանում թէ էլ ինչու է կատարում ամենահասարակ գործողութիւնները: Տարօրինակ ու ծիծաղելի կը թւի եթէ ասեմ, բայց երկար ժամանակ այնպիսի դրութեան մէջ էի, որ երբ հաղնւում էի, տանից դուրս էի դալիս, թատրոն էի

1) Տես «Մուրճ» 1892 (Ժ. Պ. 1, 2, 3, 4, 5, 6:

գնում կամ ժողովարան, երբէք չէր պատահում, որ առաջին-
րոպէում ինքս ինձ հարց չը տայի թէ՛ ինչի է պէտք այդ-
և յաճախ երկար ժամանակ էր անցնում մինչև որ ազատուում էի
այդ զգացմունքից, ուշքի էի դալիս ու ինքս ինձ ասում, թէ դեռ
նրա հետ չը ծանօթացած հօ ճաշում էի, մօրուքս խուզում ու
ուրիշ այդպիսի դործողութիւններ կատարում: Առաջին ամիսներում
բաւական շատ ճանապարհորդեցի. հասաւ մինչև անգամ Իսլանդիա.
բայց շուտակա՛ն լծերին, նորւեգիական Ֆիորդներին ու իսլանդական
գէջգերներին նայելիս սեփական անմիջական տպաւորութիւններ
չէի ստանում, այլ միայն աշխատում էի երևակայել, թէ արդեօք
Անեկան ինչ կը զգար այս կամ այն տեսարանը տեսնելիս ու ինչ
կ'ասէր. մի խօսքով տեսնում էի նրա աչքերով, մտածում էի նրա
խելքով, զգում էի նրա սրտով: Իսկ երբ որ յետոյ յիշում էի որ
նա անւանւում է պանի Կրոմիցկա, ձեռաց նստում էի երկաթուղի
կամ նաւ ու շարունակում էի ճանապարհս, որովհետև տեսածս
այլ ևս ինձ չէր հետաքրքրում: Ի՞նչ միտքաբուծիւն կարող էր
լինել ինձ համար այն, որ այդ իմ մէջ կատարողը այն սովորա-
կան ու մինչև անգամ ծաղրի առարկայ դարձած դրամաներից մէկն
է, որոնք ինձնից առաջ հազարաւոր յիմարների են տանջել: Մահն
էլ ամենքին է տանում և սակայն իւրաքանչիւր վախճանողի
թւում է, թէ իւր հետ միասին աշխարհն էլ է ոչնչանում, — և
խկապէս ոչնչանում է:

Զը գիտեմ և չեմ էլ ուզում իմանալ, թէ իմ սկզբի ամիս-
ներում զգացածս որ աստիճան անհունութեան մօտեցող յուսահա-
տութիւն էր: Այդ ամենը համեմատական բաներ են: Այն գիտեմ
միայն, որ իմ ամբողջ էութիւնս գրաւած էր այդ կնոջով և որ
առաջին անգամը հասկացայ, թէ ինչ դատարկութիւն կարող է
պատճառել սաստիկ սիրելի էակի մահը:

Սակայն սակաւ աւ սակաւ կենսական սովորութիւնները — ոչ
հաճօքները — նորից իրանց սովորական ոյժը ստացան իմ մէջ: Ինձ
թւում է, որ այդ բաւական ընդհանուր երևոյթ է: Ներքուստ սաս-
տիկ տխուր մարդիկ եմ տեսել, որոնք սրտներումը ուրախութեան
նշոյլ անգամ չ'ունենալով, այնուամենայնիւ արտաքուստ մասամբ
ուրախ են մնացել միմիայն այն պատճառով, որ մի ժամանակ ու-

րախ են եղել և սովորել են արտայայտութեան այդ ձևին: Ինձ համար էլ հօ պէտք է դար մի ժամանակ, երբ ես զաղարէի օրինակ ատամնացաւ զգալ միմիայն այն տհաճութեան միջոցով, որ այդ ցաւը կարող էր պատճառել Անեկային: Բացի այդ, կարճ կտրած՝ թմրել, բթացել էի և վերջ ի վերջոյ դարման գտել նոյն իսկ թոյնի մէջ: Մի ժամանակ Ֆարինիի ճանապարհորդութեան մէջ կարդացել եմ, որ Վալթընները կարիճի խալթածը բժշկում են երկրորդ անգամ՝ կարիճին նոյն տեղը խալթել տալով: Այդպիսի կարիճ, այդպիսի դեղթափ՝ նոյն իսկ թոյնից ստացւած՝ էր ինձ համար, ինչպէս ասենք և առհասարակ բոլոր մարդկանց համար՝ «կատարեց» խօսքը:

Կատարեց, ուստի տանջւում եմ. կատարեց պրծաւ, ուստի դադարում եմ տանջւելուց: Այդ գիտակցութիւնը, թէ էլ ճար չը կայ, մասամբ հանգստացնում է մարդու: Շարունակ միտքս է դալիս այն Հնդիկը (ամերիկացի), որ Նիազարայի հոսանքից տարւելով, սկզբում մաքաւել է ջրվէժի ոյժի դէմ այն ծալրայեղ սաստկութեամբ, որ կարող է ներշնչել մարդու յուսահատութիւնը, բայց յետոյ տեսնելով որ ճար չը կայ կռւելու, քցել է թիերը, պառկել է նաւակի յատակին ու սկսել երգել: Ես էլ այժմ պատրաստ եմ երգել: Նիազարայի յորձանքը դեռ այն լաւ կողմն ունի, որ ում որ տանի մեծ կտորը ականջը կը թողնի. բայց կան ուրիշ յորձանքներ, որոնք շարտում են մարդու աւագոտ, ամացի, անջուր ու անբերրի ծանծաղքի վրայ: Իմ գլխիս հէնց այդ է եկել:

Իմ կեանքի չար ոգին միայն մի բան չի նախատեսել: Սաստիկ ճնշւած ու սաստիկ դժբախտ մարդը շատ աւելի քիչ բանի տեղ է դնում ինքն իրան քան բախտաւոր մարդը: Դրա առաջ նախանձոտ ճակատագիրը որոշեալ չափով անգէն է հանդիսանում: Այնպիսի տրամադրութեան մէջ էի և եմ, որ եթէ օրինակ զայրացած Ֆորտունան (բախտ) անձամբ զսր ինձ մօտ ու ասէր «Ջահննամը դու», — կը պատասխանէի՝ «Շատ լաւ ես ասում, թող ջհաննամը գնամ ես: Եւ այդպէս կը պատասխանէի ոչ երբէք Անեկայի համար վշտահար լինելու պատճառով, այլ սրտումս տիրող խորին անտարբերութեան պատճառով դէպի ամեն բան, որ կայ թէ մէջս և թէ շուրջս:

Այդ մի տեսակ միւսած զրահ է, որը ոչ միայն պաշտպանում է

մարդու, այլ և նրան վտանգաւոր է դարձնում: Պարզ բան է, որ ինքն իրան չը խնայողը, ուրիշներին էլ չի խնայի: Մինչև անգամ ասուածային պատւիրանն էլ չի հրամայում ընկերոջը իւր անձից աւելի սիրել:

Այդ չի նշանակիլ, թէ մտադրութիւն ունեւմ մօտ օրերս որ և է մարդու գլուխը թուցնելու: Ասածս գլխաւորապէս թէօրիական նշանակութիւն ունի. կենսական գործնականութեան մէջ ոչ ոք մեծ ֆնաս չի կրում դրանից, որովհետեւ եթէ այդ տեսակ անտարբերութիւնը նւազեցնում է ալտրուիզմը (սէրը դէպի ուրիշները), միւս կողմից նոյնչափ էլ պակասեցնում է եսականութիւնը: Եթէ ընկերոջս հետ մի վերմակի տակ քնելու լինեմ, ամբողջ վերմակը նրան չեմ տալ, բայց միւս կողմից էլ ամբողջը իմ վրայ չեմ քաշիլ: Վտանգաւոր, գուցէ մինչև անգամ շատ վտանգաւոր են լինում այնպիսիները միմիայն այն ժամանակ, երբ որ մարդիկ վրդովում են նրանց հանգիստը, որ յենւում է սեփական լեռնի սահմանափակման վրայ, և դրդում են նրանց դէպի լարւած գործունէութիւն: Այդ ժամանակ նրանք ունենում են մեքենայի շարժումների անվրիպութիւն և միանգամայն մեքենայի անողորմ ոյժ:

Ես էլ եմ ստացել այդպիսի մեքենայական անվրիպութիւն, մեքենայական ինքնավստահութիւն: Բաւական ժամանակից ի վեր նկատում եմ, որ իմ մտածելուս եղանակն ու կամքս ուրիշներին շատ աւելի սաստիկ եմ ներշնչում քան առաջ, թէպէտեւ ամենեւին ջանք չեմ գործ դնում դրա համար: Տառանմունքի ու թուլութեան անսպառ աղբիւր է ինքնասիրութիւնը, ունայնութիւնը ու ուրիշների վերաբերմամբ կոկետութիւն անելը: Մարդս գրեթէ անգիտակցաբար տոչորւում է դուր գալու, համակրութեան արժանանալու փափագով և դրա համար հնարքներ փնտռելիս հազար ու մի զիջումներ է անում զոհելով արդարութիւնն ու ճշմարտութիւնը: Այժմ այդ կոկետութիւնը եթէ կատարելապէս չի ոչնչացել իմ մէջ, անչափ նւազել է և իմ անտարբերութիւնը դէպի այն, թէ արդեօք դուր եմ գալիս թէ ոչ, ինձ մասամբ բարձրացնում է ուրիշներից: Այդ նկատում էի ճանապարհորդութեանս ժամանակ և մանաւանդ նկատում եմ այժմ, Պարիզում: Այստեղ շատ մարդիկ կային, որոնք ինձ վրայ ազդեցութիւն ունէին. այժմ ես նրանց վրայ ազդեցու-

Թիւն ունեւմ միմիայն նրա շնորհիւ, որ այդ ինձ աւելի քիչ է հետաքրքրում քան նրանց:

Ընդհանրապէս ինքս ինձ վրայ այնպիսի մարդու տպաւորութիւն եմ գործում, որ կարող է եռանդուն լինել, բայց չի ուզու: որովհետեւ կամքը ուղիղ յարաբերական է կրքերին, իսկ իմ կրքերը նախ և առաջ բացասական են: Քանի որ մէջս մնացել է առաջւան սովորութիւնս զննել ու մեկնել ամեն բան, այդ բացատրում եմ այսպէս, — որոշեալ պայմաններում կարելի է նոյնքան բուռն կերպով փափագ չը զգալ ապրելու, որքան որ բուռն կերպով կարելի է ուրիշ պայմաններում տոչորւած լինել ապրելու փափագով: Հաւանորէն իմ անտարբերութիւնը կետրօնացած ատելութիւն է դէպի կեանքը: Դրանից է որ ես այդ աստիճան քիչ եմ նման Դևիսին:

Անկասկած ես անհամեմատ աւելի անկախ մարդ եմ դարձել քան առաջ էի և կարող եմ Համլէտի նման ասել, Թէ մէջս ինչ որ վտանգաւոր բան կա: Բարեբախտաբար ոչ ոք ձանապարհս չի կտրում: Ուրիշներն էլ ամենքը ինձ նոյնչափ խորթ ու անտարբեր են վերաբերում, որչափ ես դէպի նրանց: Միմիայն հօրաքոյրս է, որ Վարշաւայում առաջւան պէս ինձ սիրում է, սակայն կարծում եմ, որ նրա սէրն էլ պէտք է կորցրած լինի իւր ներգործական բնաւորութիւնը, զոնէ այն չափով, որ ապագայում կարող եմ ազատ համարել ինձ հարսնախօսութիւններից:

3 ապրիլի.

Աւանդ, իմ անտարբերութիւնը, որ համեմատում էի անհամ ու անզոյն մաքուր ջրի հետ, միմիայն ըստ երևոյթին է անզոյն: Աւելի լաւ զննելով նկատում եմ, որ երեսին ինչ որ բծեր են լող տալիս, որոնք պղտորում են նրա վճիտութիւնը: Այդ բծերը իդիոսինկրազիաներ ¹⁾ են: Ոչինչ չի մնացել մէջս, բայց այդ մնացել է: Ոչ դիւր չեմ սիրում և ոչ ոքի ներգործաբար չեմ առում, բայց սիրտս լիքն է զգւանքով դէպի զանազան մարդիկ: Այդպիսիների

¹⁾ Օրգանական ատելութիւն ու զգւանք, որի պատճառը չառ անգամ զմեար է բացատրել: Թողովողական դարձածքը՝ պատռելս գալիս է նրանից — կարծեմ այդպիսի զգացմունք է արտաբայտում:

Թւին է պատկանում օրինակ Կրօմիցկին Այժմ արդէն այն չի վատար
Թւում, որ Անեկային ձեռիցս խլել է, այլ այն, որ ոտները սաս-
տիկ երկար են, իսկ ծնկներն կոճերը շատ հաստ, որ ինքը կարծես
լնկոյզ Թափ տալու ձող լինի, իսկ ձայնը՝ սրճաղացի ճռճոց է
յիշեցնում: Ասենք նա ինձ միշտ է զգւանք պատճառելիս եղել, իսկ
եթէ այժմ յիշում եմ դրա մասին, այդ ըլխաւորապէս այն պատճա-
ռով է, որ զգւանքի զգացմունքս այժմ առհասարակ առանձին կեն-
սունակութիւն է ստացել: Շարունակ մտածում եմ՝ այն մարդկանց
մասին, որոնցից ջղերս գարշում են: Եթէ այդ վերաբերւէր միայն
Կրօմիցկուն ու պանի Յելինային, դեռ հասկանալի կը լինէր, որով-
հետեւ կարող էի ենթադրել, թէ իմ դէպի նրանց զգացածս՝ զգւանքի
դիմակ կրող ատելութիւն է, բայց նրանց հետ միասին իմ յիշողու-
թեանս մէջ նոյնչափ շամաութեամբ պատկերանում են ուրիշ կեր-
պարանքներ, որոնք երբ և իցէ կեանքումս իմ մէջ հակակրութիւն
կամ զգւանք են զարթեցրել: Այդ չեմ կարող իմ առողջութեանս
վիճակով բացատրել, — երբէք այնքան առողջ չեմ եղել ինչպէս
այժմ, — ուստի հետեւեալ կերպով եմ բացատրում, — մարդիկ ինձնից
խլեցին սէրս, ժամանակը ցամաքացրել է ատելութիւնս, իսկ քանի
որ մարդս չի կարող ապրել առանց զգալու, ուստի զգում եմ ինչ-
պէս բաշարում եմ, ապրում եմ նրանով ինչ որ մնացել է ինձ:
Պէտք է այն էլ խոստովանւեմ, որ բախտաւորութիւնից դժւար թէ
կշտանայ նա, որ այդպէս է զգում ու ապրում...

Համարեա բոլորովին սառել եմ դէպի այն մարդիկը, որոնց
առաջ համակրութեամբ էի վերաբերում: Դէպի Մենատինսկին
զգում եմ ուղղակի հակակրութիւն, որ դատողութիւններս չեն կա-
րողանում խեղդել: Խօսք չը կայ, Մենատինսկին բարձր արժանաւո-
րութիւնների տէր մարդ է, բայց նա ինքն իրան շատ է դուր գա-
լիս և այդ պատճառով — եթէ նկարիչների լեզուով խօսելու լինենք —
յաճախ սեթեւեթաժ (manière) է դառնում: Իմ կարծիքով, չա-
փազանց հազիւ է պատահում, որ այն մարդը, որը նկատում է թէ
իւր վարւելու եղանակը, իւր անհատական կողմերն ու առանձնա-
յատկութիւնները դուր են գալիս ուրիշներին, չը սիրահարւի իւր
տիպի վրայ ու վերջ ի վերջոյ չը սկսի աշխատել ինքն իրան գերա-
զանցել: Մենատինսկին չափազանց սաստիկ է ցանկանում միշտ և

ամեն տեղ Մենատինսկի լինել և այդ պատճառով արևստական է դառնում ու ճոխանքի (pose) համար զոհում է իւր բնածին նրբազգացութիւնը: Դեռ ոչինչ Անեկայի մօտ անյաջող պատգամաւորութիւնից յետոյ ուղարկած այն կոպիտ հեռագիրը, այն զնա ճանապարհորդելու՝ — որ աւելորդ բան էր, որովհետև առանց նրա խորհրդին էլ կ'երթայի ճանապարհորդելու. բայց Անեկայի մարդու գնալուց յետոյ իսկոյն Խրիստինիայում նրանից նամակ ստացալ, որ զրւած էր իբր սրտանց, բայց նոյնպէս կոպիտ էր ու վերին աստիճանի սեթեւեթ: Ահա կարճառօտ կերպով այդ նամակի բովանդակութիւնը, — «Պաննա Անեկան արդէն պանի Կրոմիցկա է դարձել, — եղաւ պրծալ, — խղճում եմ քեզ, — սրտագին զրկում եմ քեզ, — կը սխալուես, եթէ կարծես, թէ ջրհեղեղ կը լինի, — աշխարհքումս դրանից աւելի կարևոր բաներ կան, — թող լեզուս բերնումս չորանայ, եթէ ճիշտ չեմ ասում, — հրաշալի երկիր է երևի նորեգիան, — վերադարձիր ու գործի կպիր, — ցանկանում եմ քեզ առողջութիւն և այլն»: Բառ առ բառ չեմ բերում նամակը, բայց տոնը այդպէս էր: Այդ տոնը ինձ սաստիկ դուր չ'եկաւ, որովհետև առաջինը՝ ես չէի խնդրել Մենատինսկուն որ ինձ արշին տար դժբախտութիւնս չափելու համար, երկրորդը՝ նրան աւելի խելօք մարդ էի համարում և կարծում էի, թէ հասկանում է, որ այն նրա ասած աւելի կարևոր բաները միմիայն այն ժամանակը դատարկ խօսքեր չեն, երբ որ նշանակում են առաջուց եղած զգացմունքներ: Մէկ ուղեցի իսկոյն պատասխանել, որ ինձ ազատի իւր հոգեւոր խնամակալութիւնից, բայց լաւ մտածելուց յետոյ ամենեւին չը պատասխանեցի և կարծում եմ, որ այդ՝ յարաբերութիւնները կտրելու ամենաքիչ նեղութիւն տուող ձևն է:

Սակայն աւելի խորը խորատուգելով ինքս իմ մէջ տեսնում եմ, որ իմ դէպի Մենատինսկին տաճած բարեկամական զգացմունքիս սառելու պատճառը միմիայն նրա հեռագիրն ու նամակը չեն եղել: Ճիշտն ասած ես չեմ կարողանում նրան ներել այն, որի համար պէտք է իսկապէս նրան երախտագէտ լինէի, այսինքն նրա միջնորդութիւնը իմ ու Անեկայի մէջ: Ինքս նրան խնդրեցի, որ յանձն առնի այդ միջնորդութիւնը, բայց հէնց այն պատճառով, որ ես նրան խնդրեցի, որ ես նրան հաւատացի բախտս ու նաւիս ղեկը,

որ ես խոստովանեցի նրա առաջ իմ թուլութիւնս ու նրան մասամբ իմ գլխիս խնամակալ դարձրեցի, որ վերջապէս իմ գլխովս անցած դժբախտութիւնն ու ստորացումը մինչև ինձ հասնելը նախապէս նրա ձեռքովն անցաւ, հէնց այդ պատճառով, ասում եմ, սրտիս խորքումը ռի եմ զգում դէպի նաւ Ինքս ինձ վրայ չարացած եմ, բայց միևնոյն ժամանակը Մետափիսկոս վրայ էլ եմ չարացած՝ ամեն բանում մասնակցած լինելուն համար Գիտեմ, որ այդ անարդարութիւն է, բայց ոչինչ չեմ կարող անել քանի որ իմ բարեկամական զգացմունքս դէպի նա ճրագի նման վառւել պրծել է:

Պէտք է այն էլ ասած, որ ես երբէք շատ էլ հակումն չեմ ունեցել դէպի բարեկամական զգացմունքը Գուցէ Մետափիսկոս հետ այն պատճառով էի մօտիկ, որ ես Ներոպայի մի ծայրումն էի ապրում, նա՝ միւս: Ուրիշ բարեկամ չեմ ունեցել: Ընդհանրապէս վերցրած, ես այն էակների թւին եմ պատկանում, որոնց անւանում են մենաբնակ: Յիշում եմ, որ շատ անգամ դրա մասին միքիչ պարծենկոտութեամբ եմ մտածել, այդ՝ ուժեղութեան ապացոյց համարելով: Յիրաւի, օրինակ կենդանիների աշխարհքում համախմբում են միմիայն թոյլ էակները, իսկ այն կենդանիները, որոնց բնութիւնը զօրեղ ժանիք ու ճանկեր է տւել, մենակ են շրջում, որովհետև ուրիշի օգնութեան կարօտութիւն չեն զգում: Բայց այդ սկզբունքը միայն բացառիկ դէպքերում կարող է ճիշտ լինել մարդկանց վերաբերմամբ: Բարեկամութեան անընդունակ լինելը աւելի յաճախ ոչ թէ մարդու ուժեղութիւնն է ցոյց տալիս, այլ նրա սրտի չորութիւնը: Իմ մէջ բացի չորսրտութիւնից այդ բանում նշանակութիւն են ունեցել վերին աստիճանի անհամարձակ ու տապալուող լինելս: Իմ սիրտս նման էր միմղայի, որ մի բան դիպչելիս իսկոյն կուչ է զալիս: Որ երբէք ոչ մի կնոջ հետ բարեկամական զգացմունքով չեմ կապւել, այդ էլ ուրիշ հարց է: Ես ցանկութիւն էի ունենում բարեկամանալ միայն այնպիսի կանանց հետ, որոնցից սիրտս բարեկամութիւնից աւելի բան էլ էր ուղում, այնպէս որ այդ չէր կարող իսկական բարեկամութիւն լինել: Դրա փոխարէն ես շատ անգամ եմ բարեկամ ձևացել այնպէս ինչպէս օրինակ աղէկսը սպտիած է ձևանում, որ աղաւանները իրանց յուշառութիւնը թող-

նեն, և ինքը հեշտութեամբ ճանկի նրանցից մէկին: Այդ չի նշանակել, թէ ես չեմ հաւատում բարեկամական յարաբերութեան հնարաւորութեանը տղամարդու և կնոջ մէջ: Նախ և առաջ ես ոչ այն տխմարներին եմ, որոնք աշխարհքս իրանց չափովն են չափում, ոչ էլ սրիկայ, ուր միշտ և ամեն բանի կասկածով է վերաբերում, և վերջապէս իմ անձնական դիտողութիւններս ցոյց են տւել ինձ, որ այդ տեսակ բարեկամութիւն բոլորովին հնարաւոր բան է: Քանի որ իրականութեան մէջ կան այնպիսի զգացմունք ու յարաբերութիւններ ինչպէս եղբոր ու քրոջ, պարզ է, որ այդպիսի զգացմունք ու յարաբերութիւններ կարող են միշտ տեղի ունենալ, երբ որ երկու թէպէտեւ իրար օտար էակներ իրանք իրանց քոյր ու եղբայր զգան: Դեռ աւելին կ'ասեմ—այդ տեսակ զգացմունքներ տածելու ընդունակ են լինում դէպի պատճառական զրոյցները բնածին ձգտումն ունեցող ընտիր հոգիները, յետոյ բանաստեղծների, փիլիսոփաների և ընդհանրապէս այն էակների հոգիները, որոնք սովորական դերձակային չափսով չեն կտրւած—ձեւած: Եթէ այդ ապացոյց է, որ իմ մէջ նիւթ չի եղել ոչ բանաստեղծի, ոչ արտիստի, ոչ էլ նշանաւոր մարդու համար, այդ և աւելի վատ է ինձ համար: Հաւանօրէն չի եղել, քանի որ կարողացել եմ դառնալ միմիայն լէօն Պոլոպսկի և ուրիշ ոչինչ:

Մի ժամանակ զգում էի, որ եթէ Անեկան իմ կինն դառնար, ոչ միայն կին կամ սիրուհի կը լինէր ինձ համար, այլ և բարեկամ: Բացը աւելի լաւ եմ համարում դրա մասին չը մտածել: Այդ տեսակ տեսիլքներ առանց այն էլ չափազանց յաճախ են այցելում ինձ և կարծում եմ, որ մինչև որ այդ տեսիլքները մի անգամ ընդ միշտ չը փախցնեմ ու հեռացնեմ ինձնից՝ երբէք կատարելապէս հանդիստ չեմ լինիլ:

Այստեղ բաւական յաճախ եմ պատահում տիկին Դեխի հետ, մինչև անգամ լինում եմ նրա տանը: Եւ ոչինչ: Բաւականաչափ ատելութիւն ու մի քիչ արհամարհանք մոխիրի հաստ շերտի տակ,—այնուհետեւ սովորական քաղաքավարի յարաբերութիւն: Նա չափազանց գեղեցիկ է, որպէս զի կարելի լինէր նրան գցել իդիոսինկրադիաների թիւը. սիրել նրան չեմ կարող, իսկ ատելու նեղութիւն տալ ինձ չեմ ուզում: Նա այդ ձեռաց հասկացաւ ու յար-

մարւեց դրութեանը: Աւելորդ է ասել, որ նրան մի քիչ չարացնում է իմ աւելացած ինքնավստահութիւնս, անկախութիւնս, բայց հէնց դրա համար է, որ նա բանի տեղ է դնում ինձ: Ճիշտ որ՝ զարմանալի է այն հեշտութիւնը, որով կանայք շատ մօտիկ յարաբերութիւնից շուտ են տալիս դէպի առաջւան հասարակ ծանօթութիւնը: Ես ու Լաուրան ոչ միայն ուրիշների մօտ ենք մեզ այնպէս հանդիպում, իբր թէ մեր մէջ ոչինչ չի եղել, այլ և մինչև անգամ այն ժամանակ երբ որ մենակ ենք լինում: Դժարութիւն ամենեւին չի զգում. սկի չի երևում, որ ինքն իրան բռնազբոսելիս լինի. քաղաքավարի է, չափաւոր քաղցր և այդ տրամադրութիւնը այն աստիճան ինձ էլ է հաղորդւում, որ մոքովս էլ չի անցնում օրինակ նրան դիմելիս ուղղակի անունը տալ:

Նրա նէպոլսեցի ազգական Մալեսկին, որ սկզբում ինձ վրայ աչքերը այնքան խիտ էր ուղծում, որ ես պարտաւոր համարեցի ինձ հարցնել, թէ ինչու է աչքերը խարաբ անում, այժմ տեսնելով, որ մեր յարաբերութիւնները հանդարտ ընթացք են ստանում, հանգըստացել է ու բարեկամացել ինձ հետ: Նա այստեղ Լաուրայի պատճառով արդէն մի մենամարտութիւն ունեցել է, որի ժամանակ, չը նայելով որ Իտալիայում սաստիկ վախկոտ մարդու հուշակ է հանել, շատ կարգին է պահել իրան: Խեղճ Դեխը արդէն մի քանի ամիս կը լինի որ գնացել է Նիւրանա և, կարծում եմ, սուգը հանելուց յետոյ Լաուրան կը պսակւի Մալեսկիի հետ: Այդ՝ աշխարհքում ամենագեղեցիկ զոյգը կը լինի: Այդ իտալացին Անտինոյի իրանն ու գլուխն ունի, ոսկեփայլ կաշին, սև սաթի պէս մազերն ու Միջերկրական ծովի ջրի գոյնն ունեցող աչքերն էլ վրադիր: Շատ կարելի է Լաուրան նրան սիրում է, բայց ինչ որ ինձ անյայտ պատճառներով երբեմն-երբեմն ակներև արհամարհանք է ցոյց տալիս դէպի նա: Մի քանի անգամ իմ ներկայութեամբ նա այն աստիճան անքաղաքավարի է վարւել նրա հետ, որ զարմանքս բերել է, որովհետև ես չէի կարող ենթադրել, թէ նրա գեղասէր բնութիւնը ընդունակ է այդպիսի բռնն արտայայտութիւնների: Ակներև է, որ Ասպասիայի հետ միասին նրա մէջ ապրում է և Քսանտիպպան ¹⁾:

¹⁾ Ասպաղիա—Պերիկլի կինը, Քսանտիպպա—Սոկրատի կինը, Առա-

Շատ անգամ եմ նկատել, որ միմիայն զեղեցիկ, հոգեկան արժանաւորութիւններից զուրկ կ'ինք, որին մարդիկ ասող են համարում, յաճախ ասողից աւելի բան է լինում, եթէ կարելի է այսպէս ասել, ամբողջ համաստեղութիւն և մինչև անգամ միաժամանակ երկու համաստեղութիւն՝ շրջապատողների համար Մեծ Արջ, իսկ մարդու համար՝ Խաչ։ Հաստատ է, որ Լաուրան Դեխի համար Խաչ էր, իսկ Մալեկիին համար Մեծ Արջ։ Գուցէ նա իմ վերաբերմամբ էլ Արջ լինէր, եթէ Պարիզի հասարակութեան մէջ իրան մի քիչ օտար զգալիս չը լինէր և նկատած չը լինէր, որ այստեղ ես նրա համար աւելի ձեռնտու կը լինեմ իբրև դաշնակից քան իբրև թշնամի։ Զարմանալի է, նա Պարիզում ինձ աւելի քիչ է դուր գալիս քան Խաչիայում էր դուր գալիս կամ առհասարակ Միջերկրական ծովի ափերում։ Նա չափից աւելի կլասիկական, չափից աւելի գեղեցիկ է Պարիզի համար, ուր ճաշակը որոշ աստիճանաչափ հիւանդոս ճաշակ է, որ արտայայտւում է նոյնպէս և գրականութեան ուղեղարւեստի մէջ, և ուր բնորոշ անճոռնիութիւնը աւելի սաստիկ է բորբոքում բթացած ջղերը քան պարզ գեղեցկութիւնը։ Ամեն մարդ հեշտութեամբ կարող է նկատել, որ կիսաշխարհի ամենահռչակաւոր աստղերը աւելի անճոռնի են քան զեղեցիկ։ Դալով Լաուրային, մի ուրիշ պատճառ էլ կայ, որ նա Սէնի ափերում համեմատաբար քիչ յաջողութիւն ունի։ Նրա խելքը ծիշտ է սովորական խելքերիցը չէ, բայց միւս կողմից այստեղի յարաբերութիւնների համար չափազանց շփոխտակ է և մանաւանդ սաստիկ քիչ ձկուն։ Այստեղ շատ կան վերին աստիճանի լուրջ ու ընդարձակ մոքի տէր մարդիկ, բայց ընկերական յարաբերութիւնների մէջ սնկի ծափահարութիւնների կ'արժանանայ առաւելապէս այնպիսի խելքը, որ կարողանում է կպչել, կախ ընկնել ամեն մի առարկայից այնպէս, ինչպէս կապիկը պոչովը կախ է ընկնում ծառի ճիւղքից, և գլխովն ինչի տալ։ Որքան որ այդ գլխովն ինքները տարօրինակ, յանկարծական ու անակնկալ լինեն, այնքան աւելի հաւաստի կը լինի յաջողութիւնը։

Չինը իդէալական ամուսին էր Պերիկլի համար, իսկ երկրորդը Սոկրատի ամեն ուտում էր՝ ինչպէս ասում է ժողովուրդը։

Մանոթ. Թ.

Լաուրան այդ հասկանում է, բայց միևնույն ժամանակը զգում է, որ այդ իւր համար նույնքան անհնարին բան է որքան օրինակ լարի վրայ խաղալը: Ինձ նա աւելի ճարպիկ է համարում այդ մոռաոր մարմնամարզութեան մէջ և դրա համար եմ ես նրան հարկաւոր:

Աշխատելով աւելացնել իւր սալոնի «the attraction»-ը (հրապոյր), նա իւր սալոնը երաժշտութեան օթեան է դարձրել: Ինքը երգում է սիրէնայի պէս և յիրաւի երգելով գրաւում է մարդկանց: Նրա մօտ յաճախ տեսնում եմ դաշնակահար Կլարա Հիլստին, որ մի ջահէլ, սիրուն գերմանուհի է և այնպիսի բարձր հասակ ունի, որ այստեղի նկարիչներից մէկը նրան բնորոշել է հետևեալ խօսքերով՝ «C'est beau, mais c'est deux fois grandeur naturelle!»¹⁾ Զը նայելով իւր գերմանական ծագման՝ նա վերջին ժամանակներս այստեղ մեծ յաջողութիւն ունէր: Գալով ինձ, ինչպէս երևում է եահին դպրոցին եմ պատկանում, որովհետև չեմ կարողանում հասկանալ արդի նւագածութիւնը, որ յենւում է ոչո՞ր վերայ՝ այսինքն՝ դաշնամուրի ատամները թափելու վրայ: Վերջին անգամը Լաուրայի մօտ Հիլստի ածելը լսելիս ինձ ու ինձ մտածում էի, թէ, եթէ դաշնամուրը մարդ լինէր ու նրա քրոջը հրապուրած լինէր, դժւար թէ նրան աւելի թունդ թափէր: Նա ֆիւ-հարմոնիա էլ է ածում: Նրա շարադրութիւնները այստեղի երաժշտական աշխարհում մեծ յաջողութիւն ունեն և խորիմաստ են համարւում, երևի նրա համար, որ տասերորդ անգամը լսելիս մարդ ինքն իրան ասում է, դուք է տասնըմէկերորդ անգամին մի բան հասկանամ: Խոստովանւում եմ, որ այսպիսի նկատողութիւններ անելը չարախօսութիւն է իմ կողմից և մինչև անգամ յանդգնութիւն, որովհետև ես երաժշտագէտ չեմ: Սակայն մտքումս հարց է ծագում, թէ արդեօք այն երաժշտութիւնը, որի հասկանալու համար պէտք է կոնսերւատորիայի պրոֆեսսոր լինել և որ անմատչելի է ոչ միայն անտաշ տգէտներին, այլ և մինչև անգամ զարգացած և որոշ չափով երաժշտական դաստիարակութիւն ստացած մարդկանց, — անչէ, ինչ որ պէտք է լինի երաժշտութիւնը, Վախենում եմ՝ երաժիշտները այդ ճա-

¹⁾ Գեղեցիկ է, բայց կրկնակի բնական մեծութիւն ունի.

նապարհով զնայով մի ժամանակ՝ գիտութիւնն ու գեղեցկութիւնը բացառապէս իրանց համար պահող եգիպտական քուրմերի կաստա կազմեն:

Այդ նրա համար եմ ասում, որ, ինչպէս նկատել եմ, Վազնէրի ժամանակից սկսած երաժշտութիւնը, օրինակ նկարչութեան հետ համեմատելով, ուղղակի հակառակ ճանապարհով է ընթանում: Նորագոյն նկարչութիւնը յօժարակամ սահմանափակում է իւր ձեռնհասութեան սահմանները, հետզհետէ հրաժարւում է գրականական ու փիլիսոփայական գաղափարներից, — չի ձգտում պատկերացնել մեկնութիւնների կարօտ պատմական ճառախօսութիւններ, քարոզներ, դէպքեր, մինչև անգամ այնպիսի այլարանութիւններ, որոնք առաջին հայեացքից իրանք իրանց չեն պարզաբանում, մի խօսքով՝ բոլորովին գիտակցաբար սահմանափակում է ձևերի ու գունաւոր բծերի վերարտադրութեամբ: Երաժշտութիւնը Վազնէրի ժամանակից սկսած բոլորովին հակառակն է անում, — ճիգ է թափում իննել ոչ միայն հնչիւնների ներդաշնակութիւն, այլ և այդ ներդաշնակութեան փիլիսոփայութիւն: Իմ կարծիքով, շուտով երևան կը գաջ մի որ և է երաժշտական մեծ հանճար, որ կ'ասի, ինչպէս մի ժամանակ ասաց Հեգէլը, — Միայն մէկն էր ինձ հասկանում ու նա էլ ինձ չը հասկացաւ:

Հիշտը երաժշտութեան մէջ փիլիսոփայութիւն անողներիցն է, որ շատ զարմանալի է, ևս առաւել, որ նրա հոգին լի է պարզութեամբ: Այդ կարիատիղան երեխայի ջինջ ու միամիտ աչքեր ունի և երեխայի պէս անկեղծ է ու բարի:

Շատերն են այստեղ փարւան դալիս նրա շուրջը, — նրանց գրաւում է թէ նրա գեղեցկութիւնը, թէ այն լուսապսակը, որ շրջապատում է ամեն մի կնոջ, որի գլխի վրայ հանգիստ է առել գեղարւեստի ձեռքը, և սակայն երբէք ամենաչնչին բիծ անգամ չի արտաւտրիլ նրա անունը: Կանայք անգամ նրա մասին լաւ են խօսում, — նա նրանց զինաթափ է արել իւր արտասովոր բարութեամբ ու ուրախութեամբ: Նա չարաճճի երեխայի նման ուրախ է, — շատ եմ տեսել նրան այնպէս ծիծաղելիս ինչպէս ծիծաղում են փակ դպրոցի աշակերտուհիները — մինչև աչքերից արտասուք գալը, որ կը գալթակղեցներ հասարակութեանը, եթէ որ ամեն բան նե-

րելի չը համարւէր նրան իբրեւ արտիստի նա որ, երաժշտական տաղանդը չը հաշւած, գուցէ ոչ շատ հարուստ օժտւած, բայց հիւանալի բարոյական տիպ է։ Լատուրան, որ իսկապէս Երան չի սիրում, մի քանի անգամ ինձ հասկացրել է, թէ Վարիատիզան սիրահարւած է ինձ վրայ։ Իմ կարծիքով այդ ճիշտ չէ, թէև այդպէս կարող էր լինել եթէ որ աշխատէի Հաստատ է, որ Կլարան ինձ շատ է սիրում և որ հէնց առաջին անգամ պատահելիս համակրութիւն զգաց դէպի ինձ։ Սա նրան վերապարձնում եմ փոխադարձը, սակայն միտք չունիմ ոտնձգութիւններ անել նրան կորուստի մատնելու համար։ Երբ որ մի որ և է կնոջ առաջին անգամ եմ տեսնում, առաջւան սովորութիւնների շնորհիւ նայում եմ նրա վրայ իբրեւ ապագայում հնարաւոր որսի վրայ, բայց այդ աւելի լեիքէքների են քան գիտակցական մտքեր։ Հետեւեալ մտածմունքս արդէն բոլորովին ուրիշ է լինում։ Ընդհանրապէս այնպիսի զգացմունք է մնացել մէջս դէպի կանայք, ինչպիսի զգացմունք որ կարող է ունենալ առևտուրից հեռացած ոսկերիչը դէպի թանկագին ակունքները։ Մի որ և է թանկագին քար տեսնելիս ինձ ու ինձ ասում եմ, — արժէ ջանք գործ դնել դրա համար, բայց յետոյ չիշում եմ, որ խանութս փակել եմ, ու ճանապարհս շարունակում եմ։

Զը նայելով դրան մի օր սկսեցի կէս-կատակով համոզել նրան, որ ես էլ հետը կը գնամ իբրեւ պատուաւոր impressario։ Ձեռն կարող ասել, թէ այդպիսի մի ճանապարհորդութիւն, եթէ երբ և իցէ գլուխ գալու լինի, ինձ համար ոչ մի հրապոյր չի ներկայացնում։

Հայրենիք իսկապէս գնալու եմ։ Հօրաքոյրս Վարշաւայի իւր տունը տւել է ինձ ու կանչում է, որ գնամ սեփականութեան իրաւունքս հաստատեմ։ Ասեմք առանց այն էլ միշտ ձիարշաւների ժամանակ գնում եմ Վարշաւա։ Ով կարող է կարծել, թէ հօրաքոյրս, որ այնքան լուրջ կ'իմ է և իրան նւիրած տնտեսութեան, աղօթքների ու բարեգործութեան, մի աշխարհային թուլութիւն ունի — ձիարշաւային սպորտը։ Այդ նրա մոլորութիւնն է։ Շատ կարելի է ժառանգական ասպետական բնազդութիւնը, որ կանայք էլ նոյնքան լաւ են ժառանգում որքան տղամարդիկ, նրա մէջ այդպիսի ելք են գտել։ Մեր ձիանքը Աստծուն է յայտնի թէ քանի տարի է որ արշաւում են և միշտ յետ են մնում։ Հօրաքոյրս ոչ մի ձիարշաւ բաց

չի թողնում, կրակ է կորում. մեր ձիերի արշաւելու ժամանակ նա բարձրանում կանգնում է կառքի յետևի նստարանի վրայ՝ կռթնած ձեռնափայտի վրայ ու գլխարկը՝ կողմնակի դրած, իսկ յետոյ բարկութիւնից կատաղում է ու մի քանի ամիս շարունակ սպան Խաւստովսկու միսն ուտում է։ Այժմ կարծեմ մի ինչ որ նշանաւոր ձի է մեծացրել և կանչում է ինձ տեսնելու իւր սե ու դեղին նոսրգի յաղթանակը։ Կ'երթամ։

Կ'երթամ նոյնպէս և շատ ուրիշ պատճառներով։ Արդէն ասել եմ, որ համեմատաբար հանդիստ եմ, ոչնչի փափագ չեմ զգում, ոչինչ չեմ ակնկալում և ոյժիս զօրածի չափ սահմանափակում եմ սեփական շնորհիւ, մի խօսքով հաշտւում եմ մի տեսակ հոգեկան անդամալուծութեան հետ, որից յետոյ կը գաջ ֆիզիկականը ու կը տանի ինձ ինչպէս տարաւ հօրս Բայց չեմ կարողացել մոռանալ, թէ ինչի շնորհիւ է որ իմ անդամալուծութիւնս ոչ կատարեալ է, ոչ էլ լիովին։ Այն մի հատիկ էակը, որին կեանքումս սիրել եմ, այժմ իմ մէջ բաժանւել է երկուսի. Նրանցից մէկը կոչւում է սպանի Կրոմիցկա, միւսը՝ Անելկա։ Պանի Կրոմիցկայի համար ես օտար մարդ եմ, նա ինձ անտարբերութեամբ է վերաբերւում, բայց Անելկան այցելւում է ինձ ու ընծայ է բերում ինձ գիտակցութիւն, որ մեղաւոր եմ, որ չիմար եմ վարւել, գիտակցութիւն՝ հոգեկան անզօրութեան, վշտի, դառնութեան, հիասթափութեան ու կորուստի։ Առատաձեռն ու բարերար ոգի. Իսկապէս լաւ կը զգայի ինքս ինձ միայն այն ժամանակ, եթէ կորէին հանէին գլխիս միջիցը ուղեղիս այն ծալքը, որ չիղողութեանս բունն է։ Ի հարկէ այսպէս էլ կարելի է ապրել, բայց այսպիսի կեանքը անտանելի ծանր է, որովհետեւ մարդաշարունակ գիտակցում է, որ ինքը անանիւ կառք է։ Ամեն անգամ աշխատում եմ գլխիցս դուրս քշել այն միտքը, թէ ինչ կը լինէր, եթէ որ բանը ուրիշ ընթացք ստացած լինէր, — բայց այդ ինձ միշտ չի յաջողում։ Իմ առատաձեռն ու բարերար հրեշտակը վերադառնում է ու նորից թափ տալիս գլխիս առատութեան եղջիւրը։ Երբեմն-երբեմն ինձ թւում է, թէ սպանի Կրոմիցկան կը սպանի իմ մէջ Անելկային և դրա համար ուզում եմ գնալ, նայել նրա բախտաւորութեանը, նրա կենցաղավարութեանը և այն բոլոր անհրաժեշտ փոփոխութիւններին, որոնք անշուշտ պէտք է կատարւած լի-

նեն նրա մէջ ու դարձրած նրան Անեղկայից բոլորովին տարբեր մարդ։ Շատ կարելի է պանի Կրօմիցկային հէնց Պրշովումը տեսնեմ։ Անկարելի է որ տաս ամսւան անշատումից յետոյ հիւանդ մօրը տեսութեան չը գայ։

Կարծում եմ, որ այդ բանում ես ինքս ինձ չեմ խաբում, անհիմն յոյսով չեմ գրաւում, և որ «ceci tuera celà»։ Յոյսս գլխաւորապէս ջղերիս վրայ է, որոնց ամեն մի շնչին բան վիրաւորում է։ Յիշում եմ, որ Անեղկայի հետ նոր ծանօթացած ժամանակս, երբ որ նրա հրապույրները սկսում էին անդիմադրելի ոյժով թուլել ինձ, միմիայն այն միտքը, թէ մի որ և է Կրօմիցկի մօտեցել է նրան, յետ էր մղում ինձ նրանից ու նրան աչքիցս քցում։ Հասկա ինչ կը լինի այժմ, երբ որ նա մի որ և է Կրօմիցկու կիներէ, երբ որ նա կրում է իւր մէջ նրան պատկանելու գիտակցութիւնը և երբ նրա հոգին ու մարմինն է։ Գրեթէ հաստատապէս կարող եմ ասել, որ նա ինձ ամեն մի քայլափոխում կը վիրաւորի, յետ կը մղի իրանից և որ «ceci tuera celà»։

Եւ վերջապէս թէկուզ այդ էլ չը լինի։ Ուրիշ կերպ որ լինի, ի՞նչ եմ կորցնելու։ Սգուել չեմ ցանկանում, բայց եթէ մինչև անգամ հանգամանքները այնպիսի ընթացք ստանան, որ ապացուցւի թէ մեղքը միայն իմն չէ, թէ ես չեմ միայն պատասխանատու եղածի համար և թէ բեռը պէտք է երկու հոգու շալակին դնել, — գուցէ այդ ինձ մի քիչ գոհութիւն պատճառի։ Ասում եմ՝ գուցէ, որովհետև չեմ կարող երաշխաւոր լինել։ Որ և է վրէժխնդրութիւն մոքովս անգամ չի անց կենում։ Խաբւած սիրողները միայն բեմի վրայ են վրէժխնդիր լինում։ Իրական կեանքում՝ տհաճութեամբ երեսները շուռ են տալիս ու դրանով բանը վերջանում է։ Այժմեան պանի Կրօմիցկային ապացուցանելու համար, որ վատ վարւեց արհամարհելով իմ զղջումս, նախ և առաջ ես ինքս պէտք է անյողողող կերպով հաւատացած լինէի, որ նա վատ է վարւել, մինչդեռ լինում են բոպէներ, երբ՝ ես իմ Աստածը՝ ոչ մի բանում հաւատացած չեմ լինում։

5 ապրիլի.

Արդէն հաստատ գիտեմ, որ պանի Կրօմիցկային կը տեսնեմ։ Հօրաքոյրս գրում է, որ նրա մարդը նրանց Վոլինի կալւածը ծա-

խել է, իսկ ինքը իւր շահադիտական գործերով գնացել է հեռաւոր արեւելեան երկիրը, այնպէս որ Անեղկային ոչինչ չէր մնում անել, բայց եթէ վերադառնալ Պլոշով մօր մօտ: Այդ լուրը առաջին րոպէում ընդունեցի, եթէ ոչ անտարբեր սրտով, յամենայն դէպս կատարեալ ներքին հաւասարակշռութեամբ, սակայն նկատում եմ, որ առացած տպաւորութիւնս գնալով աւելի ու աւելի սաստկանում է մէջս: Ասենք այդ իմ հոգեկան կազմակերպութեան առանձնապատկութիւնն է: Այժմ արդէն էլ չեմ կարողանում ոչ մի ուրիշ բանի մասին մտածել. այդ դէպքը չափից վեր կարեւոր նշանակութիւն ունի Անեղկայի ու նրա մօր համար: Կրոմիցկին հարսանիքից տաս ամիս անցած ծախել է այն աննման կալածք, որին Անեղկայի պապերը չորս հարիւր տարի տիրութիւն են արել և որին պանի Յելինսան նւիրել է իւր ամբողջ կեանքը, որպէս զի ձեռքիցը չը գնայ: Իսկ այդ պան Կրոմիցկին եկել է ու հեշտ ու հանգիստ ծախել միմիայն այն պատճառով, որ նրա համար լաւ զին են տւել և այդ նրան միջոց է տւել ապահովեցնել իւր առեւտրական գործերի յաջողութիւնը:

Ընդունում եմ, որ նա կարող է այդ փողերով միլլիոններ վատտակել, բայց այդ ինչ սարսափելի հարւած է խեղճ կանանց համար և ինչ պէտք է մտածեն նրանք նրա մասին: Հօրաքոյրս գրում է ինձ, որ ինքը այժմ նստած է պանի Յելինսայի մահճի մօտ, ու ի հիւանդութիւնը այդ լուրը ստանալուց յետոյ կրկնակի սաստկացել է: Բոլորովին հաւատացած եմ, որ Անեղկան մարդու անունով ծախելու լիազօրութիւնը ստորագրելիս չի իմացել թէ ինչ է անում: Սակայն ուրիշների առաջ նրան պաշտպանում է. հօրաքոյրս նամակումը մէջ է բերում նրա հետեւեալ խօսքերը,— «Անբախտութիւն պատահեց, բայց անխուսափելի անբախտութիւն, որի համար Կարոլին չի կարելի մեղադրել: Պաշտպանի՛ր նրան, պաշտպանի՛ր, հաւատարիմ, աննենդ ամուսին. սակայն չես կարող արգելել ինձ մտածել, որ նա քեզ կրկնակի է վիրաւորել և որ անշուշտ սրտիդ խորքումը ամենաջերմ կերպով արհամարհելիս պէտք է լինես նրան: Նրա գրկախառնութիւններն չեն կարող ջնջել քո յիշողութիւնից այդ մի խօսքը—«ծախեց»: Իսկ պանի Յելինսան, նրա հովանաւորողը, որ կարծում էր, թէ նրա առաջին գործը

հարսանիքից յետոյ այն կը լինի, որ իւր միլիոններին օգնութեամբ Անեկլայի կալածը պարտքերից կ'ազատի... Ես, յարգելի տիկիններ, որ «քաղաքացիական» ֆրազներով ոչ ոքի չեմ աշխատում շլացնել, այդպէս չէի վարել, եթէ ոչ ուրիշ պատճառներով, զոնէ նրա-զգայութիւնիցս, զոնէ ձեր սիրուն, զոնէ ձեր սիրտը չը խոցելու համար: Բայց շահադիտական գործերի համար հարկաւոր է առձեռն գումար և պինդ թիկունք: Զեմ ուզում մարգարէութիւն անել, բայց երբեմն-երբեմն այդ միլիոնները ինձ հարցական նշան են թուում: Ես կարելի է Կրոմիցկին այսուհետև տիրանայ միլիոն-ների, շատ կարելի է կալածի ծախելուց ստացած փողը նպատի այդ բանին, բայց եթէ առաջուց նա միլիոնների տէր լինէր, այդպէս խորը չէր խոցիլ կնոջ սիրտը ու չէր զրկիլ նրան պապենական յարկից: Հօրաքոյրս գրում է, որ Ծախելուն պէս ճանապարհ է ընկել դէպի Բաքու, որտեղից յետոյ պէտք է գնայ Թուրքեստան: Անեկ-կան այնքան ջհան է, որ չի կարող մենակ ապրել, ուստի մարդու բացակայութեան ժամանակ մօր հետ պէտք է կենայ, իսկ մայրը մնում է Պոշովում՝ մէկ այն պատճառով, որ հիւանդ լինելով տեղից շարժել չի կարող, երկրորդը՝ որ հօրաքոյրս նրան չի թող-նում գնայ, իսկ նա չի ուզում, որ հօրաքոյրս նեղանայ իրանից: Անեկային շատ լաւ եմ ճանաչում, այնպէս որ չէի կարող կասկած տանել թէ այդ բանում կարող էին դեր խաղալ որ և է նիւթա-կան հաշիւներ: Նրա պէս անշահասէր մարդ դժւար կարող է գտնւել աշխարհքում: Բայց մայրը, որ, եթէ կարողանայ, ամբողջ աշխարհը կը զափթի իւր մի հատիկ աղջկայ համար, անշուշտ յոյս ունի, որ հօրաքոյրս կտակումը չի մոռանալ: Ասենք իրաւունք ունի յուսա-լու: Հօրաքոյրս, որ երբէք շատ էլ հաւատ չի ընծայել Կրոմիցկու միլիոններին, մի քանի անգամ ակնարկութիւն է արել ինձ դրա մասին՝ անհանգստութեամբ ու գրեթէ խոնարհութեամբ, որովհետև նրա կարծիքով իւր բոլոր ունեցած-չ'ունեցածը պատկանում է Պոշովսկիներին, այնպէս որ վախենում է, թէ մի գուցէ նրա դիտա-ւորութիւնը ես անիրաւութիւն համարեմ: Դէպի մեր տոհմը: Որ-քան քիչ է ճանաչում նա ինձ: Եթէ որ հէնց այսօր Անեկան առանց ոտնամանի մնար ու մի զոյգ ոտնամանի համար ուզէին Պոշովը բոլոր ունեցած-չ'ունեցածովս միասին—բոլորը կը տայի:

Շատ կարելի է այդ վարժունքիս շարժառիթը ինձ Կրոմիցկուն հա-
կադրեղու շարամիտ ցանկութիւնը լինէր, բայց անշուշտ կը տայի:

Սակայն այժմ բանը դրանումը չէ: Անդադար միտքս զբաղւած է նրանով, որ Անեկլան ու մայրը այժմ Պլոշովումն են կենում և կը մնան այնտեղ այնքան ժամանակ, որքան որ Կրոմիցկու ճանա-
պարհորդութիւնը կը տևի, այսինքն Աստծուն է յայտնի թէ որքան ժամանակ: Ամեն օր պէտք է տեսնեմ պանի Կրոմիցկային... Այդ որ անցնում է մտքովս, վրաս մի տեսակ անհանգստութիւն է զալիս, որի մէջ համ հետաքրքրութիւն կայ, թէ ինչպէս կը յարգարւեն մեր յարաբերութիւնները, համ էլ երևակայումն զանազան դէպքերի, որոնք կը կարողանային տեղի ունենալ, եթէ որ դէպի նա ուրիշ կերպ տրամադրւած լինէի և ուրիշ զգացմունք տածէի: Ես երբէք ինքս ինձ չեմ խաբում: մէկ էլ եմ կրկնում, որ գնում եմ բժշկու-
լու, որ պանի Կրոմիցկային չեմ սիրում, ոչ էլ կը սիրեմ, որ ընդ-
հակառակը յոյս ունիմ, որ նա ինքը ամեն տեսակ իփփորդ ու գէյ-
զերներէից հազար անգամ լաւ դուրս կը քշի սրտիցս առաջւան Անեկ-
կային: Բայց 1 էօն Պլոշովսկին չէի լինիլ, շատ ապրած ու շատ մտա-
ծած մարդ չէի լինիլ, եթէ որ չը տեսնէի այն վտանգները, որ ուրիշ պայմաններում կարող էր յառաջացնել այդպիսի մի գրութիւն:

Բանը նրանումն է, որ եթէ սիրտս ուղէր վրէժ հանել, եթէ որ հէնց միմիայն «պանի Կրոմիցկա» անունը այնքան զգւելի չը լինէր ինձ համար որքան որ է, ինչ կարող էր ինձ արգելք լինել, ինչ կարող էր իմ ձեռքը բռնել: Մի բան որ այդ խաղաղ, քաղաքից հեռու Պլոշովում միայն մենք երկուսս էինք լինելու և մեր երկու պառաւները, որոնք իրանց անարատ առաքինութեամբ երեխայի պէս միամիտ են: Այդ կողմից հօրաքրոջս ու պանի Յելինային շատ լաւ եմ ճանաչում: Մեր հասարակութեան բարձր շրջաններում յաճախ կարելի է պատահել հիմնովին փաշտած կանանց, բայց միւս կողմից մանաւանդ հին սերնդին պատկանողների մէջ կան և այնպիսիները, որոնք իրանց կեանքը անց են կացնում, պարզ կերպով որ ասելու լինենք, հրեշտակների նման, առանց երբ և իցէ իրանց մտքերը չարի գաղափարով պղծելու: Հօրաքրոջս կամ պանի Յելինայի նման կանանց մտքովն անգամ չի կարող անցնել, թէ Անեկլային կարող է որ և է վտանգ սպառնալ, քանի որ մարդու է գնացել: Անեկլան

ինքն էլ այդ տեսակ կանանցից է։ Նա իմ վերջին խնդիրքս չէր մերժիլ, եթէ որ Կրոմիցկուն արդէն խօսք տւած չը լինէր։ Այդ տեսակ լեհուհիները գերադասելի են համարում իրանց սիրտը կոտրել քան տւած խօսքը։ Դրա մասին, որ միտք եմ անում զայրոյթս զայլիս է։ Ես խեղդում եմ սրտումս արդար լինելս ապացուցանելու պահանջը, պահանջ, որ հասկացնէր այդ տեսակ կանանց, թէ անպատիժ կերպով չի կարելի ոտնակոխ անել բնութեան օրէնքները, թէ այդ օրէնքները աւելի զօրեղ են քան բարոյականութեան արեւտական դօկտրինաները, թէ այդ տեսակ վարմունքները իրանք իրանց վրէժը հանում են մարդուց, ես շատ ու շատ բախտաւոր կը զգայի ինձ։ Ճիշտ է, որ Անելկայի դէմ սա տիկ մեղանչեցի, բայց յետոյ ի սրտէ ուզում էի արածս ուղղել և նա գիտէր այդ ու անցնումս նայնիւ մերժեց ինձ... Մերժեց երեւի նրա համար, որ կարողանար ինքն իրան ասել, — «Ես Լէօն Պլոշովսկին չեմ։ Խօսք որ տւել եմ՝ պէտք է պահեմ»։ Այդ առաքինութիւն չէ, այլ չորսրտութիւն։ Այդ հերոսութիւն չէ, այլ միայն յիմարութիւն։ Այդ խղճի ազնուութիւն չէ, այլ խղճի սնափառութիւն։ Զեմ կարողանում չեմ կարողանում մոռանալ...

Բայց ինքը պանի Կրոմիցկան կ'օգնի ինձ այդ բանում։ Երբ որ տեսնեմ իւր արած հերոսութիւնից զոհ, սառը, հետաքրքրութեամբ դիտող, թէ արդեօք ինձ ճշող դարձր պէտք եղածի չափ է ճշում, մարդու վրայ սիրահարւած կամ, եթէ ոչ սիրահարւած, զոհն այդպէս ձեւացող պանի Կրոմիցկային, — այն ժամանակ այդ առաքինի և երջանկութիւնից ու իւր առաքինութիւնից կուշա ամուսինը այն աստիճան զգւելի կը դառնայ ինձ համար, որ գուցէ նորից գնամ հիւսիսային եղջերուների հայրենիքը։ Բայց այն ժամանակ այլ ևս Անելկայի չիշատակը չի թռչիլ իմ յետեից այնպէս ինչպէս ամարը (tauka) ճախրում է նաւի յետեից։

Շատ կտրելի է՝ պանի Կրոմիցկան իմ առջև մի քիչ իմ անսրտութեան զոհի դեր խաղաց և առհասարակ իւր վարմունքով քիչ թէ շատ պարզ կերպով ինձ ուղենայ հասկացնել թէ՛ մեղքը քոնն է։ Շատ բարի։ Այդպիսի բաներ էլ եմ տեսել կեանքումս։ Ինչպէս որ արեւտական ծաղիկներն այն պակասութիւնն ունեն որ անհոս են, այնպէս էլ արեւտական փշեայ պսակներն այն արժանաւորու-

Թիւնն ունեն որ չեն ծակծկում, այնպէս որ շատերը այդ տեսակ պատկերներ ուրախութեամբ են կրում զլիններին՝ իբրեւ սաղ եկող զըլխարի: Որքան որ այդպիսի զոհերի եմ պատահել, որոնք իբր թէ յուսահատութիւնից են մարդու գնացել, սրտումս ցանկութիւն է ծագել նրանց ասելու՝ «Սուտ ես ասում, գուցէ և զոհ ես եղել կամ զոնէ անկեղծ հաւատացած ես եղել, թէ զոհ ես, մինչև այն ժամանակ, երբ որ նա, այն քո ընտրածը, առաջին անգամ մօտեցել է քեզ զիշերւան հողաթափները հազած: Այդ բոլորից սկսած դու այլ ևս կարեւար չես, այլ միայն ծիծաղելի ու գռեհկահոգի և նոյնքան աւելի ծիծաղելի ու գռեհկահոգի որքան աւելի որ զոհ ես ձեռնում:

6 ապրիլի

Ինչ հիանալի ու խելօք խօսք է յունարէն «Ananke»-ն (ճակատագիր): Առաջուց ճակատիս գրած է եղել, որ ես այդ կնոջ պատճառով հանգիստ չեմ գտնելու՝ մինչև անգամ և այն ժամանակ, երբ որ նրա վրայ այլ ևս ուշադրութիւն դարձնելիս չը լինեմ: Կալածի ծախելու ու նրա Պլոշով գալու մասին մտածմունքս շատ սաստիկ յուզեց ինձ: Գիշերը շատ վատ քնեցի. հազար ու մի հարցեր էին խռնում զլսումս ու պատասխան պահանջում: Աշխատում էի լուծել այդպիսի մի խնդիր, թէ օրինակ իրաւունք ունեւ արդեօք շեղել պանի Կրոմիցկային պարտականութեան ուղիղ շաղից թէ ոչ: Ոչ ցանկութիւն ունեւ այդ անելու, ոչ էլ կ'անեմ, որովհետեւ պանի Կրոմիցկան ինձ չի գրաւում, բայց արդեօք իրաւունք ունեմ Կեանքս լցնում եմ այդպիսի «to be or not to be»-ներով, որովհետեւ ուրիշ ոչ մի այնպիսի բան չը կայ, որով ես կարողանայի ապրել: Ասեմք այդպիսի խորհրդածութիւնները աշխարհքիս ամենաբարձր զարեւութիւնների թւին չեն պատկանում, որովհետեւ մարդս այդպիսի մտքերով զբաղած ժամանակը մեծ մասամբ նման է լինում իւր սեփական պոչը բռնել ցանկացող շանը, — ձեռքս ոչինչ չի ընկնում, ոչինչ չեմ ապացուցանում ու չարչարում եմ, բայց ինքս ինձ միտթարում եմ նրանով, որ մի օր էլ կամ մի գիշեր էլ անցաւ Բացի այդ նկատեցի, որ չը նայելով իմ ծալքացեղ սկեպտիկականութեանս այնպիսի մանրակրկիտ, նախապաշարած

խղճմտանք եմ ունեցել, որ իսկապէս սաղ կը գար Պլուշովի տէրտէրին: Նորաւուրց մարդս այնքան շատ թեկերից է հիւսւած, որ ինքն իրան արձակել ուզելիս ևս աւելի է խճճուում: Զուր էի գիշերս ինքս ինձ կրկնում, թէ այդ բոլորը ի հարկէ զուտ թէօրիական դատողութիւններ են, բայց իրաւունք ունեմ այդպէս վարւելու: Եկեղեցու գաւթից ինչ որ մի ձայն անընդհատ ասում էր ինձ,—*հօ, հօ, հօ*: Սակայն պէտք է խղճմտանքիս սանձը քաշեմ, որովհետեւ դրանից է կախւած իմ հոգեկան հաւասարակշռութիւնը: Այժմ, երեկոյեան այնպիսի տրամադրութեան մէջ եմ, որ կարող եմ այդ անել: Այսօր կէս օրից յետոյ մի ծանօթ նկարչի մօտ էի, այնտեղ էր նոյնպէս և տիկին Դեիսը, որ մի ժամանակ սկսեց երկու Ֆրանսիացի գրողների ապացուցանել, թէ կանայք պէտք է իրանց ամբողջ կեանքի ընթացքում անմատչելի մնան, թէկուզ միայն «pour la netteté du plumage» (իրանց փետուրների մաքրութեան համար): Մալեսկին կրկնում էր՝ «Oui! oui!... du plumage», իսկ ինձ թւում էր, թէ Միջերկրական ծովի բոլոր խեցգետինները պէտք է շուր եկած լինեն մէջքների վրայ ու շանգերը ցցած դէպի վեր խնդրելով Զեւին, որ կայծակ թափի տիկին Դեիսի գլխին: Ի դէպ ասել, Դեիսը այդ դարձածքը ինձնից է սովորել, իսկ ես՝ Feuillet-ից: Սակայն ես ինձ բոլորովին լուրջ պահեցի, չը ժպտացի անգամ, բայց մի տեսակ ուրախ ու ցինիկական տրամադրութիւն եկաւ վրաս, որի ցոլքը դեռ մինչև այժմ էլ մնում է մէջս և որ ամենալաւ զրահն է խղճմտանքի նախապաշարմունքների դէմ:

Բայց շարունակենք: Արդեօք իրաւունք ունեմ սիրահարացնել ինձ վրայ պանի Կրոմիցկային ու սիրահարեցնելուց յետոյ խոտորեցնել նրան պարտականութեան ճանապարհից: Նախ և առաջ, քննում եմ այդ հարցը պատուի տեսակէտից, այդ բառի այն իմաստով, որով առհասարակ գործ են ածում այն մարդիկ, որոնք իրանք իրանց ջնեսովմէն են համարում և որոնց ամբողջ աշխարհը այդպիսի մարդ է համարում: Այդ տեսակէտից ոչ մի պրակ չի կարելի գտնել, որ ինձ արգելէր այդպէս վարւել: Ի դէպ՝ առաջին հայեացքից այնպէս է թւում թէ դժւար թէ աշխարհքիս երեսին երբ և իցէ գոյութիւն ունեցած լինի պատուի կոդեքսից աւելի տարօրինակ օրէնսդիրը: Եթէ ես մէկից փող զողանամ, պատուի մասին ջնեսով-

մենների ունեցած դադափարների համաձայն, արատը ինձ վրայ կ'ընկնի, որովհետև ես եմ գողը, իսկ գողացած բանը անարատ կը մնայ. բայց եթէ մէկի կնոջը գողանամ, ես՝ գողս մաքուր դուրս կը գամ, իսկ արատը կ'ընկնի գողացածի վրայ. Խնչ է այդ Բարոյական զգացմունքի խեղաթիւրումն է այդ թէ՛ գուցէ քսակը գողանալու ու կնոջը գողանալու մէջ այն ատիճան մեծ տարբերութիւն կայ, որ այդ երկու վարմունքը մինչև անգամ չի կարելի իրար հետ համեմատել. Շատ անգամ եմ զբաղել այդ հարցով և վերջ ի վերջոյ եկել եմ այն համոզմունքին, որ քսակ գողանալն ու կնոջը գողանալը միեւնոյն բանը չեն: Մարդկային էակը չի կարող այնպիսի սեփականութիւն լինել ինչպէս անշունչ առարկան. — կնոջ գողանալը երկկողմանի կամքի գործողութիւն է: Ինչու պէտք է ես ճանաչեմ որ եւ է կնոջ մարդու իրաւունքները, երբ որ ինքը կինը չի ուզում ճանաչել այդ իրաւունքները: Իմ ինչ հոգս է նրա մարդը: Ես տեսնում եմ մի էակ, որ ուզում է իմն լինել և վերցնում եմ նրան: Նրա մարդը ինձ համար գոյութիւն չունի, նրա տւած երգումների հետ ես գործ չունեմ: Ուրեմն էլ ինչ պէտք է ինձ զսպի, — մի գուցէ յարգանքը դէպի ամուսնական հաստատութիւնը (ИНСТИТУТЪ): Բայց եթէ սիրէի, եթէ կարողանայի սիրել պանի Կրոմիցկային, հողուս խորքիցը կ'աղաղակէի, — բողբոքում եմ նրա ամուսնութեան դէմ, բողբոքում եմ այն պարտականութիւնների դէմ, որ ունի նա դէպի Կրոմիցկին. ինձ այդ ամուսնութիւնը ոտնատակ է տւել, ու տրորում է իբրև որդնի, ես զալարում եմ զգացած ցաւիցս, և երբոր վերջին շունչս տալու ըստէին ուզում եմ խաչթել ինձ տրորող զարշապարը, դուրս են գալիս մարդիկ, որոնք հրամայում են ինձ յարգել նրան: Ինչի համար, ինչո՞ւ Ինչիս պէտքն է այնպիսի հասարակական կազմակերպութիւնը, որ ծծում հանում է մէջս եղած բոլոր արիւնը, որ մեռցնում է սրտումս ապրելու որ եւ է յօժարութիւն: Ի հարկէ բնութեան օրէնքն է, որ մարդիկ ձկան միս են ուտում, բայց կարճ էք հրամայել յարգել այդ կարգը խեղճ ձկան, որին ողջ — ողջ քերթում են ու յետոյ պղնձում խաշում: Բողբոքում եմ ու խաչթում, ահա իմ պատասխանը: Սպեխսերի՛ կատարելապէս զարգացած մարդու իդէալը, որի մէջ անհատական ձգտումները բոլորովին ներգաշնալում են հասարակական

կազմակերպութեանը, միմիայն պոստուլատ է: Գիտեմ, շատ լաւ գիտեմ, որ մի որ և է Մենատինսկի կը կապէր ինձ՝ մի հատիկ հարց տալով—«Ուրեմն ազատ սիրոյ կուսակից ես»: Զէ, ես ազատ սիրոյ պաշտպան չեմ: Ես միայն ինձ եմ պաշտպանում I am for my self! Վերջապէս գլուխը քարը ձեր բոլոր թէօրիաները: Եթէ դու սիրահարւես մի ուրիշ կնոջ վրայ կամ քո կինը մի ուրիշ մարդու վրայ, տեսնենք ինչ պէտք է կարողանան անել ձեր պատւիրաններն ու հասարակական կազմակերպութիւնը յարգել հրամայող պրակները: Ամենապատ դէպքում՝ այդ իմ կողմից անհետեւամտութիւն է: Նոյնքան անհետեւամտութիւն, ինքնահակասութիւն էր իմ կողմից և այն ժամանակ, երբ որ ես, սկեպտիկս, պատարագ անել տւեցի Լէօնի ու Անելկայի համար և երբ աղօթում էի երեխայի պէս ու արտասուքս կուլ տալիս՝ տխմարի պէս: Այսուհետեւ ինքս ինձ խոստանում եմ անհետեւամիտ լինել ամեն անգամ, երբ ինձ այդ յարմար լինի, երբ յոյս ունենամ որ այդպէս վարւելուց յետոյ ինքս ինձ աւելի լաւ, աւելի բախտաւոր կը զգամ: Աշխարհիս երեսին միմիայն մի տրամաբանութիւն կայ—կրքի տրամաբանութիւն: Բանականութիւնը միայն առժամանակ նախազգուշացնում է, իսկ յետոյ, երբ որ ձիանքը սկսում են իրանց կտրատել ու անկարելի է լինում զսպել, նստում է կռապանի տեղը ու աշխատում է միայն, որ կռքը ջարդ ու փշուր չը լինի: Մարդուս սիրտը չի կարող ինքն իրան ապահովեցնել սէրից, իսկ սէրը տարր է այնպէս՝ ինչպէս ջուրը, օդը, կրակը. սէրը այնպիսի ոյժ է ինչպէս ծովի մակընթացութիւնն ու տեղատուութիւնը: Մարդուն սիրող կնոջը Բեհեզդեբուղն էլ չի կարող յաղթահարել, որովհետեւ նրա ամուսնական երդումը սիրոյ նւիրագործումն է միայն, բայց երբոր մարդ ու կնոջ մէջ պարտաւորութիւնից զատ ուրիշ ոչինչ չը կայ, առաջին պատահած կարգին մակընթացութիւնը դուրս կը շարտի նրանց՝ սատկած ձկների պէս աւազի վրայ: Ես չեմ կարող պարտաւորութիւն վերցնել ինձ վրայ, թէ չեմ ծերանալ կամ թէ միռուքս չի աճիլ և եթէ պարտաւորեմ՝ կենսական օրէնքները ոտնատակ կը տան թէ ինձ և թէ իմ պարտաւորութիւնները:

Զարմանալի բան է. այս բոլորը, որ գրում եմ, ինչպէս արդէն ասել եմ, զուտ թէօրիա է. ոչ մի այնպիսի դիտաւորութիւն չու-

նեմ, որը հարկ զգայի ինքս իմ առջև արդարացնել, և սակայն այդտեսակ մտածմունքները յուզում են ինձ և այժմ այն աստիճան յուզեցին, որ սախլած եղայ ընդհատել չիշատակարան գրելս: Ինչպէս տեսնում եմ իմ հանդատութիւնը սաստիկ արւեստական հանգըստութիւն է... Մի ժամից աւելի ման էի գալիս սենեակումս և ի վերջոյ դառայ, թէ ինչն էր ինձ այդ աստիճան գրգռողը... Այժմ արդէն շատ ուշ է: Սենեակիս պատուհաններիցը երևում է «Les Invalides»-ի զմբէթը, որ փայլելում է լուսնի շողքով այնպէս ինչպէս մի ժամանակ փայլում էր Սուրբ Պետրոսի զմբէթը, երբ որ յուսայից սրտով ման էի գալիս Պինչիօցում ու մտածում Անկիայի մասին: Ակամաց անձնատուր եղայ այդ չիշողութիւններին: Թող ինչ ուզում է լինի, թող մինչև այժմ եղածը այսուհետև էլ շարունակւի, սակայն հաստատ է, որ ես կարող էի բախտաւոր լինել, նա էլ կարող էր տասը անգամ, հարիւր անգամ աւելի բախտաւոր լինել: Հէնց այժմ էլ, եթէ որ մինչև անգամ որ և է գաղտնի դիտաւորութիւն ունենայի, եթէ որ չեմ իմանում որքան ասեմ հրապուրելի լինէր նա ինձ համար, այնուամենայնիւ սիրոս չէր տալ նրան անբախտացնել: Ես, որ ինչ էլ լինի, չեմ ուզում որ նա անբախտանայ: Բաւական էր որ մտածէի թէ կարող եմ նրա անբախտութեան պատճառ դառնալ, իսկոյն ձեռներս կը թուլանային, մէջս եռանդ ու վճռականութիւն չէր մնալ: Հապա առաջ որքան գորով է եղել սրտումս դէպի նա:

Է, այդ անցած-գնացած բան է: Իմ մէջ բազմող սկեսպոլիկը մի ուրիշ տեսակ հարց է կոխում աչքս, — արդեօք եթէ այդպէս լինի, հաստատ է որ նա իրան սաստիկ անբախտ կը զգայ: Կեանքումս բազմաթիւ դիտողութիւններով ստուգել եմ, որ կանայք միայն մաքառելիս են անբախտ զգում իրանց: Հէնց որ ներքին կռիւը վերջանում է, նրանց համար՝ կռիւ հետեանքից բոլորովին անկախ՝ սկսւում է անդորր, քաղցր ու երջանիկ կեանք... Այստեղ, Պարիզում մի ծանօթ կին ունէի, որ երեք տարի շարունակ սարսափելի տանջւում էր իւր զգացմունքների հետ կռւելով, իսկ չետոյ երբ որ վերջ ի վերջոյ զգացմունքները յաղթեցին, բոլորովին հանգըստացաւ և միայն մի բան էր միշտ տանջում նրա սիրտը, — այն, որ այնքան ժամանակ դիմադրել էր:

Բայց ի՞նչ օգուտ կայ այսպէս հարցեր դնելուց ու խնդիրներ լուծելուց: Լաւ գիտեմ, որ ամեն մի բնական բան կարելի է ապացուցանել և ամեն մի ապացոյց կասկածի ենթարկել: Անցել զնացել է այն երանելի ժամանակը, երբ մարդիկ կասկածով էին վերաբերում ամեն բանի՝ բացի բանականութեան ընդունակութիւնից որոշել ճշմարիտը ստից և բարին՝ չարից: Այժմ՝ ուղեցոյց ասող չի երևում, ամբողջ երկինքը ամպերով է ծածկւած: Աւելի լաւ է մտածեմ առաջիկայ ուղեորութեանս մասին... Հաստատ է, հաստատ, Կրոմիցկին Անելկայի կալւածը ծախել է ու նրա սիրտը խորը խոցել... Պէտք է այդ արագին տառերով գրէի յիշատակարանումս, թէ չէ հաւատալս չէր դալիս...

10 ապրիլի

Երէկ զնացի տիկին Ղևիսի մօտ՝ մնաս բարև անելու. դուրս եկաւ, որ նրա մօտ կարգին նւագահանդէս էր: Ինչպէս երևում է Լաուրան իսկապէս սիրահարւել է երաժշտութեան վրայ: Կլարա Հիլստը Ֆիս-հարմոնիա էր ածում: Նրան տեսնելը ինձ միշտ հաճութիւն է պատճառում, բայց առաւելապէս ինձ դուր է գալիս նա, երբ որ նստում է նւագարանի առաջ ու առաջին ակկորդները խփում՝ աչքերը քաշ գցած ստեղնարանի (клавиръ) վրայ: Նրա մէջ լրջութիւն, կետրոնացումն ու ար-ոստովոր անդորրութիւն կայ: Այդ ժամանակ նա ինձ յիշեցնում է սուրբ Յեցիլիային, որ սուրբերիցամենահամակրելին է ինձ համար և որի վրայ կը սիրահարւէի, եթէ որ նրա ժամանակակիցը լինէի: Ախոս որ շատ չաղթանդամ է, բայց երբ որ նա նւագում է, ես այդ մոռանում եմ: Ժամանակ առ ժամանակ նրա քաշ գցած կոպերը բարձրանում են դէպի վեր, կարծես թէ նա ուղեղիս լինի մտաբերել մի հնչիւն, որ մի ժամանակ՝ ներշնչւած բողբոջներին լսել է այնտեղ՝ բարձունքներում,—և այդ ժամանակ նա ներշնչածի տպաւորութիւն է գործում: Շատ չարմար է գալիս նրան Կլարա ¹⁾ անունը, — դժւար է գտնել նրա հոգուց անկի ջինջ հոգի: Ասացի, որ սիրում եմ նրան տեսնել, բայց ո՛չ լսել:

¹⁾ Լատիներէն Clarus նշանակում է պարզ, ջինջ:

նրա երաժշտութիւնը, աւանդ, էլի չեմ հասկանում, կամ զոնէ դժւարութեամբ եմ ըմբռնում իմաստը: Սակայն կարծում եմ, որ չը նայելով իմ չարամիտ ու յանդուգն նկատողութիւններին, նա արտակարգ տաղանդի տէր է:

Երբ որ նա վերջացրեց ածելը, մօտեցայ նրան ու կէս-կատակով ասացի, թէ հասել է Վարչաւա գնալու ընդէն և թէ մեր առաջւան պայմանագրութեան համաձայն յայտնում եմ իրան, որ պատրաստւի գնալու: Զարմացմամբ նկատեցի, որ նա իմ խօսքերը լուրջ կերպով ընդունեց: Պատասխանեց, թէ արդարեւ վաղուց մտադիր է Վարչաւա գնալ, իսկ զալով պատրաստուելուն, զրա համար շատ ժամանակ հարկաւոր չէ, որովհետեւ հետը վերցնելու գրեթէ ոչինչ չ'ունի, բացի իւր ազգական պառաւ կնոջից, որին հետը տանում է ամեն տեղ, և խուլ ստեղնարանից, որի վրայ վարժութիւններ է անում մինչև անգամ երկաթուղու վազոնում:

Այդ մի քիչ ինձ վախեցրեց: Եթէ իսկապէս հետս գալու լինի Վարչաւա, զոնէ քիչ ու միչ պէտք է օգնեմ կոնցերտ սարքելուն, մինչդեռ ես կ'ուզէի ուղղակի Պլոշով գնալ: Սկի որ չը լինի նրան կը ջանձնեմ Մնեատինսկուն, որ աւելի օգտակար կարող է լինել նրա համար քան ես: Ասեմք Վլարա Հիլստը մի ֆրանկֆուրտցի հարուստ արդիւնագործի աղջիկ է և նիւթական յաջողութիւնը նրա համար ոչինչ նշանակութիւն չունի: Սակայն ինձ զարմացնում է այն աճապարանքը, որով նա համաձայնեց հետս գնալ Վարչաւա: Առաջին ընդունումն ինձ անգամ ուղում էի ասել նրան, թէ խուլ ստեղնարանի դէմ ոչինչ չունեմ, բայց պառաւին հետը վերցնելու միտքը շատ էլ յաջող միտք չեմ համարում: Մենք՝ տղա Դարդիկս՝ այն աստիճան սովորել ենք միշտ և ամեն տեղ որոգայթ լարել կանանց, որ մեզնից ոչ մէկը ջահէլ ու սիրուն կնոջ առանց ծուռ մտքի չի մօտենում: Ով որ հակառակն է պնդում, նա իսկապէս ուղում է խաբել կանանց, որպէս զի աւելի ևս հեշտ ընկնեն որոգայթի մէջ: Գալով ինձ, իմ ուշ ու միտքս այս ընդունումն ուրիշ բանով է զբաղած և սակայն այդ պառաւ ազգականը առաջին անգամից ինձ վրայ խոչընդոտի տպաւորութիւն գործեց, ևս առաւել որ իմ անձնաւորութիւնը հաւանօրէն որոշեալ դեր է խաղում Վլարայի շտապողական վճռի մէջ: Պարիզը շատ աւելի ընդարձակ

ասպարէզ է երաժշտական հանդէսների համար քան Վարչաւան, իսկ նիւթական օգուտը նոյնպէս նշանակութիւն չունի Կլարայի համար, էլ ինչու է ուրեմն ուզում գնալ Վարչաւան Լաուրան, ինչպէս արդէն ասել եմ, վաղուց է ակնարկներով ինձ հասկացրել, թէ օրիորդ շիւտոր դէպի ինձ համակրութիւնից աւելի առաջ զգացմունք է տածում... Տարօրինակ կ'ին է այդ Լաուրան: Կլարայի անմեղութիւնը նախանձ է շարժում նրա սրտում, բայց միմիայն այնպիսի նախանձ, ինչպիսին կարող էր, օրինակ, շարժել մի հաղադիւտ թանկագին քար կամ մի շքեղ վարսակալ... Միշտ և ամեն ինչ նրան հետաքրքրում է իբրև զարդարանք, աւել ոչինչ: Երևի նախանձն է պատճառը, որ ուրախութեամբ այդ ահագին երեխային կը զցէր իմ գիրկը: Ես նրա համար ոչինչ նշանակութիւն չունեմ, որովհետև այնպիսի զարդ եմ, որ նա արդէն կրել է իւր վզին:

Այդ կ'ինը ակամայից ինձ այնքան չարիք է պատճառել, որ իսկապէս պէտք է ատելութիւն զգայի դէպի նա, սակայն չեմ կարողանում նրան ատել: Նախ, խիղճս ինձ ասում է, որ եթէ նա ամենևին չը յայտնէր էլ իմ կենսական ծանապարհի վրայ, ես այնուամենայնիւ մի ուրիշ նոյն չափ ազդու միջոց կը գտնէի իմ երջանկութիւնը փշաղենելու համար. երկրորդը՝ ինչպէս որ սատանան զահավիժած հրեշտակ է, այնպէս էլ ատելութիւնը այլասեռած սէր է, իսկ ես Լաուրային երբէք չեմ սիրել: Մի քիչ արհամարհում եմ նրան, բայց այդ ուրիշ բան է և, բացի այդ, նա էլ այդ կողմից ինձնից յետ չի մնում: Մինչև անգամ կարծում եմ, որ նա ինձ աւելի չարակամութեամբ է վերաբերում քան ես նրան:

Գալով Կլարայի դէպի ինձ տածած զգացմունքներին, Լաուրայի կարծիքը, ինչպէս տեսնում եմ, պէտք է որ մի քիչ ճիշտ լինի: Այդ այսօր ինձ աւելի պարզ երևաց քան երբ և իցէ: Եթէ այդ ճիշտ է, շնորհակալ եմ նրանից: Այս առաջին անգամն է կեանքումս, որ ցանկութիւն եմ զգում բարեկամութիւն հաստատել կին-մարդու հետ և արդարացնել նրա վստահութիւնը: Իմ հոգուս պէս անհանգիստ հոգին այժմ կարող է հանգիստ գտնել այդպիսի բարեկամութեան մէջ:

Այսօր ես ու Կլարան իսկը բարեկամական խօսակցութիւն ունեցանք: Նրա խելքը շատ էլ ընդարձակ չէ, բայց դրա փոխարէն՝

պարզ է ու շատ լաւ որոշում է չար ու անճոռնի համարածը բարի ու զեղեցիկ համարածից, ուստի և չի խարխափում ու մոլորւում և վերին աստիճանի խաղաղ է ու պայծառ։ Նրա մէջ նկատելի է մի տեսակ հոգեկան առողջութիւն որ, պէտք է ասած, գերմանացիների մէջ յաճախ է պատահում։ Զանազան տեղերում գերմանացիների հետ շփելով նկատել եմ, որ օրինակ այն տիպի մարդիկ, որին ես եմ պատկանում, նրանցում շատ քիչ կան։ Գերմանացիք ինչպէս և անգլիացիք դրական մարդիկ են, նրանք դիտեն թէ ինչ են ուզում։ Նրանք էլ շատ անգամ խորասուզւում են կասկածների անեղր ովկէանի մէջ, բայց նրանք այդ անում են մեթոդաբար, իբրեւ գիտնականներ, ոչ իբրեւ զգացող մարդիկ՝ ոչ էլ անպորտֆեօյլ հանճարների նման։ Ուստի և նրանց վերջին ժամանակների տրանսցեդենտալ փիլիսոփայութիւնը, նրանց արդի գիտնական պեսսիմիզմը, նրանց բանաստեղծական «Weltschmerz»-ը միայն թէօրիական նշանակութիւն ունեն։ Գործնականութեան մէջ նրանք հիանալի յարմարւում են կեանքի պայմաններում։ Ըստ Հարտմանի մարդկութիւնը որչափ ուժգին ու գիտակցօրէն ապրի՝ այնչափ աւելի անբախտ կը լինի և միեւնոյն Հարտմանը գործնականութեան մէջ հանգիստ սրտով դրդում է գերմանացի-կուլտուրորեզներին զօրացնել գերմանական կեանքը ի վնաս Պոզնանի բնակիչների (լեհերի)։ Բայց, մի կողմ թողած այդ դէպքը, որ՝ ի միջի այլոց ասած՝ մարդկային ստորութիւնների թւին է պատկանում, գերմանացիք առհասարակ սառնասիրտ են վերաբերւում թէօրիային, ուստի և հանգիստ են և ընդունակ գործ կատարելու։ Այդ տեսակ հանգստութիւն Նլարայի մէջ էլ կայ։ Այն բոլորը, որ կարող է տալն ու վրայ անել մարդու հոգին, պէտք է որ նրա ականջին էլ հասած լինի, բայց, ինչպէս երեւում է, երեսանց սահ տալով անցել է առանց թափանցելու։ Նրա արիւնի մէջ և դրա շնորհիւ երբէք նրա սրտում կասկած չի ծագել դէպի իւր դաւանած ճշմարտութիւնը ինչպէս և դէպի իւր երաժշտութիւնը։ Եթէ նա դէպի ինձ համակրութիւնից աւելի քնքրոյշ զգացմունք է տածում, հաւանօրէն այդ այնպիսի զգացմունք կը լինի, որ նա չի գիտակցում և որը ոչինչ չի պահանջում։ Այն բոլորից, երբ այդ զգացմունքը դադարէր այդպէս լինելուց, կ'սկսէր նրա դրաման, որովհետեւ ես անկարող կը լինէի փոխադար-

ձաքար նոյն տեսակ զգացմունք տածել ղէպի նա. ես կը կարողանալի միայն շահել նրա այդ զգացմունքից այն ձևով, որ նա կ'անբախտանար: Ես այն անձնապատաս մարդկանցիցը չեմ, որոնք կարծում են թէ ոչ մի կին չի կարող նրանց դիմադրել. ես միայն այն կարծիքին եմ, որ ոչ մի կին չի կարող դիմադրել այն տղամարդուն, որին խնայպէս սիրում է: Պաշարւած բերդը՝ առնւած բերդ է: դարձւածքը արդարեւ շատ մաշւած ու անտանելի դարձւածք է, բայց այնուամենայնիւ ճշմարտութեան վերայ է հիմնւած և մանաւանդ հարիւրապատիկ աւելի ճիշտ է, երբ որ վերաբերւում է այնպիսի կնոջ, որ իւր առաքելութեան պարիսպների մէջ իւր սրտի նման դաւաճան է կրում կրծքումը: Բայց Կլարան կարող է հանգիստ լինել: Մենք հանգիստ կ'երթանք,—նա, ես, պառաւ ազգականը և խուլ ստեղնարանը:

16 ապրիլ:

Երեք օր է, որ Վարշաւայումն եմ, բայց մինչև այժմ չեմ կարողացել ղնալ Պոշով, որովհետեւ զայնու պէս ատամներս սկսեցին ցաւել ու երեսս ուռեց: Ձեմ ուզում այս դրութեամբ ներկայանալ օրկիներին:

Մենատինսկուն արդէն տեսել եմ. հօրաքոյրս էլ եկաւ ինձ տեսութեան ու ողջունեց ինձ իբրեւ անառակ որդու: Անեկան մի շաքաթ է ինչ եկել է Պոշով: Նրա մայրը այնքան տկար է, որ բժիշկները, որոնք առաջ ուզում էին նրան ուղարկել Վիսրադէն, այժմ տեսնում են, որ ոչ մի ճանապարհորդութեան չի դիմանալ: Այդպիսով՝ նա պէտք է մնայ Պոշովում մինչև որ տկարութիւնը թեքւի ղէպի առողջանալը կամ ղէպի մահ: Անեկան էլ նրա հետ՝ մինչև որ Կրոմիցկին օր առաջ իւր գործերը վերջացնի ու յարմար դատի մի տեղ մշտական բնակութիւն հաստատել: Բայց հօրաքոյրս ասածներից ես եղբակացրի որ Կրոմիցկու ուղևորութիւնը մի քանի ամիս կը քաշի: Աշխատեցի հօրաքոյրիցս որքան կարելի է շատ տեղեկութիւն դուրս քաշել Անեկայի մասին, որ ինձ շատ հեշտ յաջողեց, որովհետեւ հօրաքոյրս նրա մասին ինձ հետ բոլորովին ազատ է խօսում: Նա ուղղակի չի կարողանում ենթադրել, որ մարդատէր կինը մի ուրիշ տղամարդու կարող է հետաքրքրել այլապէս քան իբրեւ

ազգական, և դեռ աւելի՝ այդպիսի հարց անգամ չի ծագում նրա գլխում: Այդպիսով՝ նա անկեղծօրէն խօսում էր ինձ հետ նրանց կալւածի ծախելու մասին, որը նա էլ չի կարողանում ներել Կրմից-կուն: Վերջումը նա այն աստիճան բարկացաւ, որ վզից կախ տւած շղթան կտրեց ու ժամացույցը վայր ընկաւ տախտակամածի վրայ:

— Ես նրա երեսին կ'ասեմ, — ասում էր նա, — որ այդ կրկնակի լրբութիւն է: Աւելի կը համարէի պարտքով փող տալ նրան: Բայց ինչ օգուտ: Նրա սպեկուլացիան անտակ անդունդ է: Զը դիտեմ ինչով է վերջանալու, բայց այժմ ինչ կայ չը կայ կուլ է գնում մէջը: Թող մի աչքիս երեւայ, իսկոյն կ'ասեմ, — պարոն, Անեկային էլ գերեզման կը մոցնես, Յելինային էլ և վերջ ի վերջոյ կտոր կընկնես: Նրանց ինչին են պէտք նրա միլիոնները, երբ որ ամեն մի կոպէկի համար արիւն-արտասուք պէտք է թափեն: Կարգին մարդը այդպիսի բան չի անիլ: Միշտ պատուելս զայիս էր այդ չորացրած սունկից, դուրս է զալիս, որ սկի սխալւած չեմ եղել:

Հարցրեցի նրանից, թէ արդեօք այդ բանի մասին անկեղծ խօսացել է Անեկայի հետ:

— Անեկայի հետ չաւ է՝ դու եկար, զոնէ՝ քեզ հետ կարող եմ ազատ խօսել, սիրտս հովացնել: Անեկայի հետ դրա մասին անկեղծ խօսել չի կարելի: Մի անգամ չը կարողացայ դիմանալ, սկսեցի խօսել, նեղացաւ ինձնից ու լացը դրեց: «Զէր կարող չը ծախել, չէր կարող, չէր կարող» — կրկնում էր շարունակ: Զի թողնում որ մարդ բերան բաց անի նրա մասին. որ կարողանար նրա բոլոր պակասութիւնները կը ծածկէր ուրիշներից: Բայց ինձ՝ պառաւիս խաբել չի կարող. սրտումը նա էլ ինձպէս դատապարտում է նրա այդ վարմունքը:

— Ուրեմն, ձեր կարծիքով Անեկան նրան չի սիրում:

Հօրաքոյրս զարմացած նայեց ինձ վրայ:

— Ի՞նչ: Հապա էլ ի՞նչ է սիրելու: Խեղճը հէնց նրա համար է տանջուում, որ սիրում է նրան: Բայց կարելի է մէկին սիրել և միևնույն ժամանակ տեսնել նրա վատ կողմերը:

Ես այդ հարցի վերաբերմամբ մի քիչ ուրիշ հայեացք ունեմ, բայց աւելի լաւ համարեցի լռել: Նա շարունակեց խօսքը.

— Ամենավատն այն է իմ կարծիքով, որ նա ստախոս է: Հա-

ւատացրել է Յեղիշային ու Անեղիային, թէ մի տարուց՝ շատ-շատ երկու տարուց յետոյ կը կարողանայ յետ գնել նրանց կալածքն Դու ասա, այդ հնարաւոր բան է: Ասա: Բայց մերոնք աշխատում են իրանք իրանց համոզել որ, ինչպէս ասել է, այնպէս էլ կը լինի:

— Իմ կարծիքով, այդ բոլորովին անկարելի բան է: Նա շարունակելու է սպեկուլացիայով պարապել:

— Նա ինքը մեզնից լաւ գիտէ այդ, կը նշանակի դիտմամբ խաբում է նրանց:

— Դուք է նրա համար է այդ անում, որ նրանք շատ դարդ չ'անեն:

Հօրաքոյրս աւելի թունդ բարկացաւ:

— Ինչպէս թէ՛ դարդ չ'անեն: Դարդ չէին անիլ, եթէ որ չը ծախէր: Իզուր մի պաշտպանիլ նրան: Ամեն մարդ պէտք է դատապարտի նրան: Խըւաստովսկին զայրոյթիցը քիչ էր մնում զժւէր: Նա տեղեկացել է գործերից ու ասում է, որ եթէ կոպէկ անգամ չը ստանար ոչ մի կողմնակի աղբիւրից, այնուամենայնիւ յանձն կ'առնէր երկու տարում պարտքի տակից ազատել նրանց կալածքը, — իսկ պարտք հէնց առաջինը ես ինքս կը տայի, դու էլ կը տայիր: Կը տայիր, չէ: Տեսնում ես: Իսկ այժմ կորած բան է:

Յետոյ սկսեցի հարց ու փորձ անել Անեղիայի առողջութեան մասին: Ես հարցնում էի զազոնի, զարմանալի, անբացատրելի անհանգստութեամբ, որովհետեւ վախենում էի՝ այնպիսի մի բան հաղորդէր հօրաքոյրս, որ եթէ պատահած լինէր, բոլորովին բնական, սովորական բան կը լինէր և որը սակայն, չը գիտեմ ինչու, կը կտրատէր, կը յոշոտէր ջգերս: Շատ ողորմելի մարդ եմ: Բախտիցս՝ հօրաքոյրս հասկացաւ հարցմունքիս միտքը և առաջւան զայրոյթով պատասխանեց.

— Ոչինչ չը կայ... Սիրտ չի անում... Ծախելը՝ ծախեց, իսկ այդ— վախենում է, սիրտ չի անում...

Խօսակցութեան նիւթը իսկոյն փոխեցի: Ասացի հօրաքրոջս, որ ինձ հետ միեւնոյն գնացքով Վարշաւա է եկել այժմեան ամենամեծ պիանիստուհին, որ շատ հարուստ կին է և սաստիկ փափաղում է մի քանի կոնցերտ տալ յօգուտ չքաւորների: Հմմա տարօրինակ բնաւորութիւն է հօրաքրոջս բնաւորութիւնը: Առաջ սկսեց

չարձակել չիլտոի վրայ, թէ ինչու չի եկել ձմեռը, երբ որ նւա-
դահանդէսների ամենալաւ ժամանակն է. իսկ յետոյ միտք արեց տե-
սաւ, որ այժմ էլ դեռ կարելի է կոնցերտ սարքել, և ուզում էր
խնդն և եթ զնալ նրա մօտ: Հաղիւ հազ կարողացայ նրան հա-
մոզել, թէ աւելի լաւ կը լինի՝ չիլտոին առաջուց իմաց տամ,
որ ինքը զնալու է նրա մօտ: Հօրաքոյրս մի քանի բարեգործական
ընկերութիւնների նախագահ է և պատուի խնդիր է համարում՝
այդ ընկերութիւնների համար ի հաշիւ ուրիշ ընկերութիւնների
կորզել ինչ որ ձեռքն ընկնի, ուստի վախենում է մի զուցէ ուրիշ
մէկը իրանից առաջ դիմի չիլտոին:

Գնալիս հարցրեց ինձ.

— Ե՞րբ ես փոխում Պլոշով:

Բայց ես պատասխանեցի, որ ամենեւին չեմ փոխւելու: Զանա-
պարհին մտածեցի տեսայ, որ աւելի լաւ կը լինի Վարչաւայում
կենամ: Այստեղից Պլոշով եօթը վերստ է, այնպէս որ ամեն օր
առաւօտեան կ'երթամ ու կը մնամ մինչև երեկոյ: Ինձ համար այդ
միւնոցն է, իսկ զանազան կասկածների այլալիտով տեղիք տւած
չեմ լինիլ: Բացի այդ ուզում եմ, որ պանի Կրոմիցկան էլ մոքովը
անց չը կացնի, թէ ինձ համար կարող է ցանկալի լինել նրա հետ
մի չարկի տակ ապրելը: Մենայտինսկու հետ խօսելիս էլ ասացի, որ
միտք չ'ունիմ Պլոշով փոխւելու, այնպէս՝ կարծես թէ մի կողմնա-
կի ու նշանակութիւն չ'ունեցող բանի մասին խօսելիս լինէի: Տե-
սաց, որ բոլորովին հաւան կացաւ այդ մոքիս և մինչև անգամ
ցանկութիւն ունէր երկար ու բարակ խօսել Անելկայի մասին: Մենա-
տինսկին անկասկած խելօք մարդ է և սակայն չի հասկանում, որ
պայմանների փոխւելուց յետոյ մինչև անգամ ամենամտերիմ բարե-
կամների չարաբերութիւններն էլ են փոխւում: Նա այնպէս եկաւ
մօտս, կարծես ես մինչև այժմ էլ այն Լէօն Պլոշովսկին լինէի, որ
Կրակովում տերեւի պէս դողալով խնդրում էր նրան փրկել իրան.
մօտեցաւ ինձ նոյն կոպիտ բացարտութեամբ և ուզում էր միանգա-
մից ձեռք արմուկահաւ կոխել հոգուս մէջ: Հէնց առաջին բոպէին
թափը կտորեցի: Սկզբում այդ պատճառով նա մի քիչ չարացած ու
զարմացած էր, բայց յետոյ չարմարեց իմ տրամադրութեանը ու
սկսեցինք այնպէս խօսել, իբր թէ մեր վերջին անգաման տեսակ-

ցութիւնը ամենեւին տեղի ունեցած չը լինէր: Սակայն տեսնում էի, որ նրան հետաքրքրում է իմ այժմեան տրամադրութիւնը, որովհետեւ, չը կարողանալով ուղղակի հարցնել, նա սկսեց կողմնակի կերպով հարց ու փորձ անել, իսկ գրող-արտիստի անշնորհքութեամբ, որ խորազնին հոգեբան ու սրատես անալիտիկ է իւր գրասենեակում և գիմնադիստի պէս միամիտ՝ գործնական կեանքում:

Եթէ ձեռքիս սրինգ լինէր, կարող էի Համլէտի պէս տալ նրան ու ասել, — լսնդեմ ածես, իսկ եթէ ասում ես թէ ածել չը գիտես, հապա ինչպէս ես ենթադրում՝ դու, որ փայտի կտորը հնչեցնել չես կարողանում, թէ կարող ես ուղածիդ պէս նւագել իմ հոգուս լարերով:

Այդ համեմատութիւնը անցաւ մտքովս, որովհետեւ երէկ գիշեր, չը գիտեմ այս էլ քանիերորդ անգամը, կարդում էի Համլէտը: Ինձ համար բոլորովին անհասկանալի է այն երևույթը, որ հիմիկան մարդը, ինչ հասարակական դիրք էլ ունենայ, ամեն մի ամենաթունդ նորաւուրց ու բարդ հոգեկան խանգարման ժամանակ ոչ մի բանում այնքան նմանութիւն չի գտնում իրան, որքան այդ՝ Հոլինշէդի կոպիտ ու արիւնալից առասպելի վրայ հիմնած դրամայում: Համլէտը՝ մարդկային հոգին է այնպէս, ինչպէս եղել է նա, ինչպէս է և ինչպէս լինելու է: Իմ կարծիքով՝ Շեքսպիրը այդ դրամայում անցել է այն սահմանը, որ որոշւած է մինչև անգամ հանճարների համար: Հոմերին կամ Դանտէին ես հասկանում եմ իրանց դարի Փոնի վրայ: Հասկանում եմ, որ նրանք կարող էին անել այն ինչ որ արել են, բայց թէ ինչպէս է կարողացել այդ անզլիացին տասնութերորդ դարում նախազգալ այն բոլոր հոգեկան հիւանդութիւնները, որոնք տասնիններորդ դարի արդիւնքն էին լինելու, այդ, չը նայելով Համլէտի մասին գրած հազար ու մի հետազոտութիւններին, մշտական հանելուկ կը քնայ ինձ համար:

Այդպէս՝ տալով Մեկատինսկուն Համլէտեան սրինգը, նրա հոգատարութեանը յանձնեցի Կլարային: Յետոյ սկսեցի նրա հետ խօսել նրա դաւանանքների մասին: Ասացի, որ իսկապէս այստեղ զայուս պատմաբ. հայրենիքիս կարօն ու պարտականութեանս զգացմունքն է եղել: Բայց այդ այնպիսի անհոգ եղանակով ասացի, որ Մեկատինսկին չէր իմանում՝ ծաղր էր այդ թէ իսկական զգացմունքի

արտայայտութիւնս եւ նորից կրկնեց այն երեւոյթը, որի մասին արդէն չիշել եմ Պարիզում գրելիս: Այն բարոյական ազդեցութիւնը, որ վերջին դէպքերի շնորհիւ ձեռք էր բերել ինձ վրայ Մեհաոփնսկին, հաւուում—չքանում էր բոպէ առ բոպէ: Նա չէր իմանում ինչպէս բացատրէր այդ միայն մի բան էր հասկանում—որ հին բանալիքներով ինձ բաց անել չի կարողանում: Մնաս բարեանելիս, երբ որ նորից խնդրեցի օգնել Կլարային, սուր-սուր նայեց ինձ վրայ ու ասաց.

—Այդ շնոտ կարեւոր է քեզ համար:

—Շնոտ, որովհետեւ իմ մօտ բարեկամս է և ես շատ յարգում եմ նրան:

Այդպիսով նրա ուշադրութիւնը կետրոնացրի Կլարայի վրայ: Հաւանօրէն կը կարծի, թէ այժմ էլ նրան եմ սիրում: Զարացած դնաց: Երբէք չի կարողանում զգացածը ծածկել: Դուռը յետեւից մի քիչ պինդ փակեց, բացի այդ՝ երբ որ սանդղաների վրայ նրան ճանապարհ դնելուց յետոյ յետ էի դառնում նախասենեակը լսում էի, թէ ինչպէս չորս-չորս աստիճան միանգամից էր իջնում ու շատ բարձրաձայն շրշրւացնում, որ անում է միշտ, երբ որ մի որ և է բանից դժգոհ է լինում:

Սենք նրան ծիշտ էի ասում, թէ ինձ համար կարեւոր է որ Կլարայի գործը յաջող դնայ: Այսօր դրեցի Կլարային, բացատրեցի թէ ինչու մինչև այժմ իրան տեսութեան չեմ զնացել, և իսկոյն պատասխան ստացայ: Նա հիացած է Վարչաւայից և մանաւանդ վարչաւացիներից: Այտուղի բոլոր նշանաւոր երաժիշտները այս երեք օրւայ ընթացքում այցելել են նրան աշխատելով գերազանցել միմեանց իրանց սիրալիր վարմունքով ու իրանց ծառայութիւնը առաջարկելով: Գրում է, թէ ոչ մի տեղ չի պատահել այդ աստիճան սիրալիր մարդկանց: Կարծում եմ, եթէ ուղեւոր այստեղ ընդ միշտ բնակութիւն հաստատել, գուցէ այդքան սիրալիր չը վարէին հետը, թէև պէտք է ասած նա ընդունակութիւն ունի ամեն տեղ բարեկամներ գտնելու: Արդէն մի քիչ պոտել—տեսել է քաղաքը: Առանձնապէս զուր է եկել նրան Լազենկին: Շատ ուրախ եմ, որ Վարչաւան այդպէս հիացմունք է պատճառում Կլարային, ևս առաւել որ սահմանը անցնելուց յետոյ Լեհաստանի բնութիւնը նրա վրայ

ճնշող տպաւորութիւն գործեց: Արդարեւ մեր անշէն ու տափակ շրջակայքում մի բան չը կայ, որի վրայ մարդուս աչքը կարողանար հանգիստ առնել, և մարդ պէտք է այստեղ ծնած լինի, որպէս զի կարողանայ այդ տեսարաններում որ և է հրապոյր գտնել: Կլարան վագոնի պատուհանիցը դուրս նայելով շարունակ կրկնում էր, — «Ախ, այժմ հասկանում եմ Շոպէնին: Ի դէպ ասել նա սխալում է, որովհետեւ չի հասկանում Շոպէնին¹⁾» ոչ խելքով, ոչ զգացմունքով, ինչպէս որ չէր կարողանում հասկանալ այստեղի բնութեան տեսարանները:

Ես, թէև հոգով արտասահմանի զաւակ եմ, բայց մի տեսակ ատաւիզմի շնորհիւ կարողանում եմ զգացմունքով ըմբռնել մեր բնութիւնը և դիտելով՝ յաճախ զարմացմամբ ստուգել եմ, որ դարձան հայրենիք վերադառնալիս միշտ անյագ կերպով զարմանում եմ նրա տեսարաններով: Սակայն իսկապէս ասած՝ ինչ մի երևելի տեսարաններ են: Շատ անգամ դիտմամբ աշխատել եմ երևակայել, թէ ես օտարազգի նկարիչ եմ, ոչ մի առանձին զգացմունք չեմ տածում դէպի այստեղի բնակութիւնը և նայում եմ նրա վրայ օտարի աչքով՝ օրեկտիւ կերպով: Այդպէս երևակայելիս այստեղի տեսարանները այնպիսի տպաւորութիւն էին գործում ինձ վրայ, կարծես վայրենի մարդու կամ միայն խաղեր զծագրել իմացող երեխայի քաշած նկարներ լինէին: Այդ տափակ անվար հանդերը, թաց մարգագետինները, ուղղանկիւն շրջագիծով խրճիթները, հորիզոնի ծայրում՝ կալածատէրերի պարտէզների բարդիները, վերջապէս՝ անտառով շրջափակած լայնատարած դաշտավայրը, այդ ինչպէս գերմանացիք ասում են՝ «տասը մղոն ոչ ինչը», այդ բոլորը միշտ չիշեցնում էր ինձ նկարչութեան նախատիպարը իւր՝ ծրագրի ու գծերի վերին աստիճանի աղքատութեամբ: Իսկն ասած՝ այդ այն էլ դժարութեամբ՝ կարելի է միայն ֆոն համարել: Բայց հէնց որ դաւարում եմ օտարի աչքով նայելուց, հէնց որ սկսում եմ զգալ այդ տեսարանների պարզութիւնը, թափանցել նրանց այն անսահման ընդարձակութեան մէջ, որի մէջ ամեն մի որոշ ձև հալւում, ձուլ-

¹⁾ Շոպէնը՝ Լեւ Կոմպոզիտոր է:

ւում է այնպէս, ինչպէս հոգին նիրւանայի մէջ,—նրանք իմ աչքումը ոչ միայն ակզբնատիրակերի արտիստական հրապույրն են ունենում, այլ և սկսում են ինձ վրայ հանգստացնող կերպով ազդել: Ես օրինակ կարող եմ հիանալ նայելով Ապենինեան սարերին, բայց հոգիս չի կարող թափանցել նրանց մէջ, նա դէմ է աւնում ու մնում է դրսեւ: Այդ դէպքում՝ վաղ թէ ուշ մարդ կ'սկի ձանձրանալ: Մարդ իսկապէս հանգստանում է միայն այն դէպքում, եթէ որ ի մի է ձուլւում իւր շրջապատի հետ, իսկ ձուլւել կարող է միմիայն այն ժամանակ, երբ նրա հոգին ու արտաքին բնութեան հոգին միատեսակ, իրար համապատասխան կազմակերպութիւն ունեն: Նոստալգիան ¹⁾ հէնց նրանից է յառաջանում, որ մարդու հոգին դուրս է կորզւում իրան շրջապատող իրերի ամբողջութիւնից: Ինձ թւում է թէ այդ հոգեկան խնամութեան (споухство) սկզբունքը կարելի է աւելի էլ ընդլայնել: Գուցէ զարմանալի թւի, որ ես, որ արտասահմանումն եմ կրթւած ու այնտեղի կուլտուրայով համակւած, այս տեսակ հայեացքներ եմ յայտնում, բայց աւելի կ'ասեմ,—մինչև անգամ օտարազգի կիներ, թէկուզ գեղեցկութեան կողմից ամբողջ աշխարհում հաւասարը չ'ունենայ, ինձ համար միշտ կը լինի որդեալ չափով միմիայն ներկայացուցիչ կանացի սեռի և ոչ՝ կնոջ հոգի:

Միտքս է թէ մի ժամանակ ինչեր էի գրում լեհուհիների մասին: Բայց մէկը միւսին չի խանդարում: Ես կարող եմ շատ լաւ տեսնել նրանց թերութիւնները և այնուամենայնիւ ինձ աւելի մօտիկ զգալ նրանց քան օտարազգի կանանց: Բացի այդ, առաջւան հայեացքներն մեծ մասը հին շորի պէս գզգզւել է:

Բայց հէրիք է դրա մասին: Ամօթով ու զարմացմամբ նկատեցի, որ այս բոլորը գրելուս նպատակն այն էր, ինքս ինձ խօսքով զցէի, զբաղեցնէի: Այո, այդպէս է, այդպէս: Երկար ու բարակ խօսում եմ բնութեան տեսարանների ու կարօտախտի մասին, իսկ ուշ ու միտքս իսկապէս Պլոշովումն է: Չեմ ուզում այդ խոստովանւել, բայց պէտք է խոստովանւել: Մէջս ինչ որ անհանգստութիւն է բուն դրել. սիրտս սաստիկ ճմլւում է: Շատ կարելի է, թէ Պլոշով գնալս թէ այնտեղ

¹⁾ Հալոնիքի սաստիկ կարօտից յառաջացած հիւանդութիւն:
Մանօթ. Թարգմ.

Մնալս անհամեմատ աւելի հեշտ լինի քան ես երեւակայում եմ այժմ
այս սպասողական դրութեանս մէջ: Նախընթօրից (ԵԱՅՄԻՏ) անտա-
նելի բան չկայ: Մի անգամ ջահէլ ժամանակս պէտք է մենամար-
տութեան դուրս գայի և յիշում եմ, որ սիրտս անհանգիստ էր մի-
միայն նախընթաց օրը: Այն ժամանակն էլ աշխատում էի մի ուրիշ
բանով զբաղեցնել միտքս և նոյնքան ապարդիւն՝ որքան և այսօր:
Իմ մտածմունքները ամենևին գործովային չեն, ոչ էլ մինչևանգամ
բարեկամական՝ պանի Կրօմիցկայի վերաբերմամբ, այլ միայն զար-
մանալի կերպով վխտում են գլխումս. տեղահան արած մեղուներէ
նման թափում են վրաս ու չեմ կարողանում նրանց ձեռքից
ազատուել:

(Կը շարունակւի)